

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Ներածություն** ..... 3

**1. Հայագիտական կենտրոն** ..... 8

    1.1 «Հայության, մասնավորապես հայ համայնքների անվտանգության խնդիրները» ..... 9

    1.2 «Այլադավան, այլալեզու Հայության և մասնավորապես Թուրքիայի իսլամացված հայերի խնդիրները» ..... 12

    1.3 Հայության հիշողության քաղաքականության խնդիրները ..... 16

    1.4. «Հայագիտական կենտրոնի 2009թ. աշխատանքային ծրագիրը» ..... 19

    1.5. «Հայագիտական կենտրոնի զարգացման տեսլականը» ..... 20

**2. Քաղաքական հետազոտությունների կենտրոն** ..... 25

    2.1 *Տարածաշրջանային անվտանգություն* ..... 26

    2.2 *Էներգետիկ անվտանգություն* ..... 29

    2.3 *Հայաստանը գլոբալ աշխարհում* ..... 31

    2.4 «Քաղաքական հետազոտությունների կենտրոնի 2009թ. գործունեության ծրագիրը» ..... 32

    2.5. «Քաղաքական հետազոտությունների կենտրոնի զարգացման տեսլականը» ..... 34

**3. Տեղեկատվական հետազոտությունների կենտրոն** ..... 38

    3.1 *Հրատարակչական ծրագիր* ..... 38

    3.2 *Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրություն* ..... 39

    3.3 *Կապեր գիտական, վերլուծական և ուսումնական կենտրոնների հետ* . 40

    3.4 «Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի 2009թ. գործունեության ծրագրերը» ..... 40

**4. Ուսումնական կենտրոն** ..... 43

    4.1 «Նորավանքյան ընթերցումներ» ..... 43

    4.2 «Ուսումնական կենտրոնի 2009-ի գործունեության ծրագիրը» ..... 44

**5. «Գործունեության ապահովման ծրագիր** ..... 47

**Հավելված 1. «Հայագիտական կենտրոնի շրջանակներում հրապարակված աշխատանքները** ..... 53

**Հավելված 2. «Քաղաքական հետազոտությունների կենտրոնի շրջանակներում հրապարակված աշխատանքները** ..... 66

Հավելված 3. «Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի  
շրջանակներում հրապարակված աշխատանքները ..... 80

Հավելված 4. «Նորավանքե ԳԿՀ-ի 2008թ. ստացված ֆինանսական միջոցների և  
կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկանք ..... 84

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2008 թ. Հիմնադրամն աշխատանքներ է իրականացրել «Հայագիտական կենտրոնի, «Քաղաքական հետազոտությունների կենտրոնի, «Տեղեկատվական կենտրոնի և «Ուսումնական կենտրոնի (Նորավանքյան ընթերցումներ) ու «Գործունեության ապահովման ծրագրերի և 4 նախագծերի շրջանակներում:

Հետազոտական կենտրոնների աշխատանքները կրում են միջոցիսցիպլինար բնույթ և փոխկապակցված են: Հետազոտական աշխատանքներն իրագործվում են ՀՀ ազգային (ՀՀ, ԼՂՀ և Հայության) անվտանգության ռազմավարության համատեքստում:

### *Հրատարակումներ*

2008թ. Հիմնադրամի կողմից հրատարակվել են.

- 1 գիրք – *Հ.Հմայակյան, «Զրույցներ հայ մշակույթի մասին»*
- 4 համար «21-րդ ԴԱԸ» հանդես,
- 2 համար «21-ի *Bekt*» հանդես,
- 2 համար «21<sup>st</sup> Century» հանդես,
- 3 համար «Տեղեկագիր Նորավանք ԳԿՀ-ի»,
- 5 համար «*Գլոբուս*»,
- 5 համար «*Գլոբուս տարածաշրջանային անվտանգություն*»,
- 4 համար «*Գլոբուս ազգային անվտանգություն*»,
- 5 համար «*Գլոբուս տեղեկատվական անվտանգություն*»,
- 12 համար «*Գլոբուս էներգետիկ անվտանգություն*»:

**Ընդհանուր առմամբ – 43 հրատարակում:**

### *Հրապարակումներ*

«Նորավանք-ի աշխատակիցները հեղինակել են **286 տպագիր** աշխատանք, ասոցիացված փորձագետները՝ 73, համագործակցող փորձագետները՝ 23:

### *Գիտաժողովներ, սեմինարներ*

Հիմնադրամի աշխատակիցները **23 միջազգային (որոնցից երկուսի համակազմակերպիչը եղել է «Նորավանք-ը) և հանրապետական գիտաժողովներում հանդես են եկել 25 զեկուցումներով:**

«Նորավանքյան ընթերցումների և շարքում իրականացվել է **7 դասախոսություն**, կազմակերպվել **2 սեմինար**։

ԶԼՄ-ին տրվել են մի քանի տասնյակ հարցազրույցներ։

### **Համագործակցություն**

- Հիմնադրամը սպասարկում է (հնարավորությունների շրջանակներում) ՀՀ պետական կառույցները՝ **ՀՀ կառավարություն, ԱԱԽ, ՄՆ (Միջուկի նախարարություն), ԱԳՆ և ՊՆ**;
- Հանդիսանում է **«Հայոուսգագարդե ընկերության** գործընկերը էներգետիկ անվտանգության ոլորտում;
- «Արևմտահայության համագումարի կազմակերպող է ՀԿ գործընկերը Հայության անվտանգության ոլորտում;
- Մերտ համագործակցում է՝ **2 տեղական** («Կովկասի ինստիտուտ, ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվ. Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ) և **6 արտասահմանյան** («Քաղաքակրթությունների երկխոսություն է ՀԿ, Մոսկվա, ԱՀ Բորսայի վերլուծական դեպարտամենտ, Մոսկվա, «Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ, Մոսկվա, «Քաղաքական հետազոտությունների կենտրոն, Մոսկվա, «Ռուսաստանի կառավարման բարձրագույն դպրոց, Մոսկվա, Մեծ Բրիտանիայի «Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտ հետազոտական կենտրոնների հետ);
- ստեղծագործական կապեր է հաստատել տասնյակ առաջատար փորձագետների և կազմակերպությունների հետ։

### **Կայք**

Հիմնադրամի կայքը **2008 թվականին ունեցել է 61 000 այցելու, ինչը 2 անգամ ավելին է, քան նախորդ տարի**։ **2009-ին սպասվում է 100 – 120 հազար այցելու**։ Ինտերնետում «Նորավանք-ի վերաբերյալ կա մի քանի տասնյակ հազար հիշատակում։ 2008թ. **Էլեկտրոնային բովանդակության երրորդ համահայկական մրցույթում «Նորավանք ԳԿՀ կայքն (<http://noravank.am>) արժանացել է առաջին կարգի մրցանակի**։

## **Կառուցվածքը և աշխատակազմը**

Հիմնադրամում ներկայումս գործում են 4 կենտրոն և 2 ծրագիր: Դրանք են՝

1. Հայագիտական կենտրոն,
2. Քաղաքական հետազոտությունների կենտրոն,
3. Տեղեկատվական հետազոտությունների կենտրոն,
4. Ուսումնական կենտրոն,
5. Հրատարակչական ծրագիր,
6. Գործունեության սպասարկման ծրագիր:

Հիմնադրամում 2008-ից գործում է նաև կազմակերպչական նոր ձևաչափ՝ **Նախագիծ**, որի աշխատանքներում այս կամ այն չափով ընդգրկված են Հիմնադրամի բոլոր ստորաբաժանումները: Դրանք են՝

1. «Տարածաշրջանի հետազոտական կենտրոնների վարկանիշային դասակարգում»,
2. «Մեր հաղթանակները»,
3. «Հայության առանցքային անձինք և իրադարձությունները – փորձագիտական ինտերնետ ֆոկուս հարցում»,
4. «Հայ ձեռներեցները շարունակական տեղեկատուների կազմում և հրատարակում»:

Հիմնադրամի հաստիքային ցուցակում ընդգրկված են **40 աշխատակիցներ**, որոնք բաշխված են ըստ հետևյալ ոլորտների.

- հետազոտական-ուսումնական ոլորտում - **20 փորձագետ**, որոնցից 2-ը՝ գիտ. դոկտոր, 6-ը՝ գիտ. թեկնածու, 2 փորձագետ պատրաստում են թեկնածուական թեզ,
- հրատարակչական (այդ թվում՝ կայքի) ոլորտում - **9 մասնագետ**, որոնց թվում՝ 1 գիտ. թեկնածու,
- վարչական - տնտեսական բաժնում – **4 աշխատակից**,
- տեխնիկական աշխատակազմ (պահակային հերթափոխային ծառայություն, հավաքարարներ) – **7 աշխատակից**:

Այլ գիտահետազոտական կենտրոններից (այդ թվում՝ արտերկրից) Հիմնադրամի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցում են **30** վերլուծաբան, որոնցից 4-ը **սանցակազմ աշխատակիցներ են** և նրանց հետազոտությունները շարունակաբար տպագրվում են Հիմնադրամի հրատարակումներում:

## ***Հիմնադրամի զարգացման տեսլականը***

***Կառույցի տեսլականը.*** Հիմնադրամի ***գլխավոր նպատակն Ազգային (Հայաստանի և Հայության) անվտանգության համատեքստում,*** հայագիտության, քաղաքական և տեղեկատվական գործընթացների հետազոտության ոլորտներում, անհրաժեշտ մտավոր և գաղափարական - հոգևոր ռեսուրսներ ունեցող, ինչպես նաև գործունեության արդյունքների կիրառման մեխանիզմներին տիրապետող ***ինստիտուցիոնալ կառույցի վերածվելն է:***

***Գործունեության տեսլականը.*** Այսօր Հայության և մասնավորապես մեր հանրության առաջնային հիմնախնդիրը մտավոր - հոգևոր ռեսուրսների նվազումն է: Այդ երևույթի համատեքստում Հիմնադրամը պետք է ձգտի կատարել ազգային ընտրանու և հանրության գաղափարական - գիտելիքային փորձագիտական սպասարկումը, մշակել և իրագործել նախագծեր, որոնք կնպաստեն հայության ինքնակազմակերպմանը, աջակցել ազգային ստեղծագործական և պետական-քաղաքական ընտրանու ձևավորմանը:

***Նախադրյալները.*** Այսօր Հիմնադրամը որոշակի դերակատարում ունի պետական – քաղաքական – վերլուծաբանական հանրության հասկացությունների դաշտի ձևավորման գործընթացում (օրինակ, Հայությունը՝ քաղաքակրթական միավոր, տարալեզու – տարադավան Հայություն, Հայաստանի և Հայության տեղեկատվական անվտանգություն, Հայության տեղեկատվական - ցանցային կազմակերպում և այլն): Հիմնադրամի մտավոր ռեսուրսները, կատարվող հետազոտությունների արդիականությունը և հրատապությունը, կիրառվող կազմակերպչական տեխնոլոգիաները, ինչպես նաև տեղեկատվական դաշտում ունեցած դերակատարումը նպաստել են հանրությունում յուրատեսակ «նորավանքյանե մշակույթի ուրվագծերի գոյացմանը:

Այս ամենը որոշակի իրատեսություն է հաղորդում Հիմնադրամի տեսլականին:

## *Հիմնախնդիրները*

- Հիմնադրամը դեռևս բավարար չի տիրապետում հետազոտական մեթոդիկաներին և տեխնոլոգիաներին (կոնտենտ և դիսկուրս վերլուծություն, կանխատեսման և սցենարային մշակումների տեխնոլոգիաներ, վարկանիշային ցուցակների կազմում և այլն) և չունի բավարար մտավոր (պատրաստված կադրերի տեսքով) և նյութական ռեսուրսներ դրանց տիրապետելու համար;
- Հիմնադրամը դեռևս բավարար չափով չի ստանում պատվերներ (աուտոսոբսինգային հիմունքներով) պետական կառույցներից, մինչդեռ, ելնելով ՀՀ-ում այդ ոլորտում առկա իրադրությունից և նման կառույցների գործունեության միջազգային փորձից, այդ հատվածը պետք է գերակա լինի Հիմնադրամում;
- Հիմնադրամը չունի բավարար նյութական ռեսուրսներ:

# 1. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ղեկավար՝ Ռուբեն Մելքոնյան

Կենտրոնը ներառում է երեք ծրագիր. *«Հայության, մասնավորապես հայ համայնքների անվտանգության խնդիրները, «Այլադավան, այլալեզու Հայության և մասնավորապես Թուրքիայի իսլամացված հայերի խնդիրները և «Հայության հիշողության քաղաքականության խնդիրները:*

Կենտրոնի շրջանակներում 2008թ. հրատարակվել են *1 մենագրություն, 142 տպագիր աշխատանք* (տե՛ս Հավելված 1), այդ թվում 134-ը՝ Կենտրոնի աշխատակիցների, 5-ը՝ «Նորավանքե-ի այլ փորձագետների, 3-ը՝ Կենտրոնի հետ համագործակցող այլ հետազոտողների կողմից: Կատարված հետազոտությունների վերաբերյալ Կենտրոնի աշխատակիցները հանդես են եկել 15 գեկուցումներով՝ միջազգային 12 գիտաժողովներում, մասնակցել են քննարկումների:

Կենտրոնում աշխատում են 7 մասնագետներ, այդ թվում՝ 2 գիտությունների դոկտոր և 2 գիտությունների թեկնածու:

2008թ. հունվարից ձևավորված «Նորավանքե ԳԿՀ Հայագիտական կենտրոնի նպատակն է ի մի բերել հիմնադրամի շրջանակներում տարվող հայագիտական բնույթի հետազոտությունները, դրանք դարձնել առավել համակարգված և ուղղորդել գերազանցապես գիտագործնական ուղղությամբ, Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների ինտենսիվացման ուղիներ նախանշել:

Կենտրոնի խնդիրներն են, անդրադառնալով Հայության արդիական հնչողություն ունեցող հարցերին, ուշադրության կենտրոնում ունենալ հայկական տարբեր համայնքներում տեղի ունեցող գործընթացները, զբաղվել դրանց ներուժի (այդ թվում՝ տնտեսական) գնահատմամբ և համայնքային կյանքի ինքնակազմակերպման ուղիների հստակեցմամբ (համայնքային վերկայքեր) և արդյունավետ մեխանիզմների մշակմամբ, տարալեզու-տարադավան հայության (մասնավորապես՝ Թուրքիայի մահմեդական հայության) ինքնության ուսումնասիրությամբ և, ծանոթանալով այլոց փորձին՝ մշակել հայության հիշողության քաղաքականության հիմնախնդիրները: Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների ուրույն ճյուղն է կազմում ՀՀ-ին սահմանակից երկրների ուղեղային կենտրոնների (*think-tank*) շտեմարանների կազմումը: Կենտրոնի խնդիրների մեջ մտնում է նաև, օգտագործելով ցանցակենտրոն համակարգի առավելությունները, ուսումնասիրության արդյունքներն օգտագործել Հայության անվտանգության հիմնախնդիրների լուծման համար:



Հետազոտությունները կատարվել են հետևյալ ուղղություններով.

**1.1 «Հայության, մասնավորապես հայ համայնքների  
անվտանգության խնդիրները»**

*Ղեկավար՝ Թամարա Վարդանյան*

**Հետազոտությունների և աշխատանքների ուղղվածությունը.**

- Վրացական ազգայնականության հակահայկական բաղադրիչների արմատների և թիֆլիսահայերի ինքնության հետ կապված հարցերի հետազոտում, այդ հարցերի շուրջ դաշտային հետազոտության իրականացման նպատակով հարցարանի մշակում:
- Գիտագործնական բնույթի հետազոտությունների անցկացում վիրահայության իրավիճակի խնդիրների շուրջ, այդ թվում՝ ա) մամուլի մշտական մոնիթորինգի իրականացում վիրահայության իրավիճակի խնդիրների շուրջ, համայնքի առանձին ակտիվիստների հետ մշտական տեղեկատվության փոխանակում, բ) փորձագիտական հանրության հետ (Դ. Կանայանի անվ. ռազմավարական ինստիտուտ) քննարկումների անցկացում:
- Կրասնոդարի հայկական համայնքի հետ կապերի հաստատում:
- Մոսկվայի Հասարակական գիտությունների ինստիտուտի հետ կապերի հաստատում, համատեղ ծրագրերի մշակման հեռանկարների ճշգրտում:
- Մասնակցություն ՀՀ Սփյուռքի նախարարության կազմակերպման նախնական աշխատանքներին և հայեցակարգի ճշգրտմանը:
- Տարվա ընթացքում տեղ գտած ուսումնասիրությունների հանրայնացում համապատասխան զեկուցումներով միջազգային գիտաժողովներում, այլ ձևաչափի հանդիպումներում:
- Վրաստանում գործող think-tank-երի շտեմարանի ստեղծում:
- «Եկեղեցի - պետություն - հանրություն» կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքների իրականացում:
- Արտերկրի հայկական համայնքների վեբկայքերի տվյալների համալիր շտեմարանի ձևավորում:
- Արտերկրի հայկական համայնքների վեբկայքերի բովանդակային մոնիթորինգ և վերլուծություն՝ համայնքային կյանքի ուսումնասիրման, հայկական համայնքների ներուժի գնահատման, համայնքային խնդիրների բացահայտման և այլ նպատակներով:

- Սփյուռքում հայապահպանության խնդիրների ուսումնասիրություն ու, մասնավորապես, Դամասկոսի հայ համայնքի հետազոտության իրականացում:
- Ռուսաստանի հայոց գործարար-ֆինանսական ներուժի ուսումնասիրում:

**Վատարված հետազոտություններից հետևում է, որ.**

- Հայ-վրացական հարաբերությունների բարելավումը՝ տարածաշրջանում և նրա սահմաններից դուրս, ձեռնտու է միայն հենց հայերին ու վրացիներին:
- Վրացալեզու մամուլում շարունակվում են հակահայ հրապարակումներ, ինչը, վրացի որոշ փորձագետների համոզմամբ, պայմանավորված է այն հանգամանքով, որ Վրաստանի պետությունը վարում է ինքնահաստատման քաղաքականություն, ինչը ենթադրում է ազգայնականության նկատելի մակարդակ: Ներկայումս այն ավելի շատ արտահայտվում է կենցաղային հարթությունում, և հայերն են, որ «ստանձնել են նման դերակատարում:
- Վրացիների կամ Վրաստանի իշխանությունների հասցեին Երևանից հնչած ցանկացած մեղադրանք վրացական կողմն ընկալում է որպես երրորդ ուժերի (հիմնականում՝ ռուսական) կողմից հրահրվող հռետորականություն կամ սադրանք և տեսնում է առավելապես քաղաքական ենթատեքստ ռուս-վրացական ներկայիս քաղաքական հակասությունների համատեքստում:
- Այսօր Թիֆլիսում ապրող վրացիները տեղի հայերի ընկալմամբ տարանջատվում են երկու հիմնական հատվածների՝ հին Թիֆլիսեցիների և նոր՝ հեռավոր շրջաններից եկածների: Հայերն իրենք իրենց համարելով հին Թիֆլիսեցիներ՝ հաճախ հակադրվում են նորեկների մշակույթին ու բարքերին, և այս հակադրությունը Թիֆլիսահայերին միավորում է հին Թիֆլիսեցի վրացիների հետ:
- Թիֆլիսահայն իրեն չի համարում սփյուռքում ապրող հայ, որն ինքնության պահպանման կարիք ունի:
- Թիֆլիսյան միջավայրում սոցիալ-տնտեսական զարգացումներն ավանդաբար ստանում են էթնիկ երանգավորում և վերաձևավորում են միջէթնիկ հարաբերությունները: Այդ գործընթացն առավել մանրամասն և անընդհատական ուսումնասիրման կարիք ունի:
- Վերջին շրջանում Թիֆլիսահայ իրականության մեջ արտահայտվում է ոչ միայն էթնիկ ինքնությունը, այլև հետզհետե արմատավորվում է նաև քաղաքացիական գիտակցությունը: Սա նշանակում է տեղի հայության՝ վրացական միջավայրին ինտեգրման տեմպերի ուժգնա-

ցում, ինչը վաղ թե ուշ հանգեցնելու է հայկականության թուլացմանը և հայկական տարրի աստիճանական ուժացմանը Թբիլիսիում:

- Ռուս-վրաց-օսական պատերազմը նոր իրավիճակ ստեղծեց տարածաշրջանում, ինչը հանգեցրել է թուրքական «ծագումե ունեցող ծրագրերի ակտիվացմանը հատկապես Վրաստանի այն հատվածներում, որտեղ բնակվում են էթնիկ փոքրամասնությունները, այդ թվում նաև հայերը:
- Վրացիների շրջանում ուժեղանում է էթնիկ ազգայնականությունը, ինչը դրսևորվում է հակահայկական նոր ալիքի բարձրացմամբ և հատկապես Նորաշենի Սուրբ Աստվածածին եկեղեցու շուրջ ընթացող վեճերով: Ջարգացումներին տեղյակ վրաց փորձագետները չեն ողջունում հոգևոր իշխանությունների վարած քաղաքականությունը Նորաշենի շուրջ և այդ գործողությունները համարում են ոչ միայն հակահայկական, այլ նաև հակավրացական: Հետևաբար, վրաց փորձագիտական հանրույթում կան առողջ, կոնստրուկտիվ ուժեր, որոնց հետ նպատակահարմար է համագործակցել:
- Վրաց-օսական հակամարտության վերջին սրման օրերին (սույն թվականի օգոստոս) ջավախահայության վարքագծի դիտարկումը ցույց տվեց վերջինիս հոգեբանական օտարվածությունը Վրաստան պետությունից:
- Ամերիկայի հայ համայնքում վերջին շրջանում ուժեղացել է այն գիտակցությունը, որ Հայոց ցեղասպանության ճանաչման համար լոբբիստական գործունեությունից զատ՝ կարևոր նշանակություն ունի նաև քարոզչական աշխատանքը:
- Կիպրոսի հայ համայնքը Սփյուռքի ամենակազմակերպված և ակտիվ համայնքներից մեկն է: Դա հատկապես արտահայտվում է համայնքային կյանքի աշխուժության մեջ: Միաժամանակ, կիպրոսաբնակ հայությունը՝ որպես ողջ կիպրոսյան հասարակության մի մաս, ակտիվորեն մասնակցում է այդ երկրի հասարակական-քաղաքական կյանքին և ունի իր դիրքորոշումները: Այսքանով հանդերձ Կիպրոսի հայ համայնքը զերծ չէ նաև հիմնախնդիրներից ու մարտահրավերներից: Վերջիններս վերաբերում են հայոց լեզվի պահպանման հեռանկարին, հայկական կրթական հաստատությունների իրավիճակին, կիպրոսաբնակ հայության սոցիալական դրությանը և այլն:
- Դամասկոսի հայ համայնքը, լինելով Սփյուռքի ավանդական համայնքներից մեկը, տիրապետում է ինքնակազմակերպման արդյունավետ, ավանդական մեխանիզմների և ունի զգալի ներուժ, այդ թվում՝ ֆինանսական, սակայն կարիք ունի արդիականացնելու ազգային կազմակերպման ավանդական գործառույթները: Դամասկոսի հայերն ինտեգրված են սիրիական հասարակությանը, միաժամանակ

մեծ ջանքեր են ներդնում՝ պահպանելու ազգային ինքնությունը: Դամասկոսի հայ համայնքն այն համայնքներից է, որտեղ եկեղեցու կամ թեմական խնդիրը պառակտվածություն է առաջ բերել՝ մեծ հարված հասցնելով միասնականությանը: Այդ համայնքի ազգային ինքնությանը մեծ հարված են հասցնում գլոբալացման տարաբնույթ դրսևորումները, այդ թվում՝ խառնամուսնությունները, ժողովրդագրական անկումը, օտարամոլությունը, արաբական մշակութային էքսպանսիան, նահանջը հայկական դաստիարակությունից: Դամասկոսի հայ համայնքի ազգային կյանքի աշխուժացումը շատ բաներով պայմանավորված է Հայաստանից եկող ազդակներով:

## ***1.2 «Այլադավան, այլալեզու Հայության և մասնավորապես Թուրքիայի իսլամացված հայերի խնդիրները»***

*Ղեկավար՝ Ռուբեն Մելքոնյան*

### **Հետազոտությունների ուղղվածությունը.**

- Այլադավան, այլալեզու հայության և մասնավորապես Թուրքիայի իսլամացված հայերի վերաբերյալ համակողմանի ուսումնասիրություն, ենթաշերտերի որոշակիացում և տարանջատում, մոտեցումների մշակում, խնդիրների սահմանում, աշխարհագրական տեղաբաշխման հստակեցման աշխատանքների իրականացում (մասնավորապես, Թուրքիայում նրանց բնակության հիմնական վայրերը):
- Թուրքիայից Եվրոպա արտագաղթած իսլամացված հայերի խնդրի և հատկապես նրանց շրջանում ներկայումս տեղի ունեցող գործընթացների (կրոնադարձություն, ինքնության ճգնաժամ) հետազոտում:
- Իսլամացված հայության մասին տեղեկատվության համակարգում:
- Իսլամացված հայության սոցիալական վիճակի հնարավոր պատկերը ձևավորելու ուղղությամբ ուսումնասիրություններ:
- Իսլամացված հայերի և նրանց սերունդների մեջ էթնիկ պատկանելության ճգնաժամի կամ, այսպես կոչված, «ինքնության ճգնաժամի», արմատների որոնումների, ցեղասպանության մասին հիշողության առկայության ուսումնասիրություն:
- Ժամանակակից թուրքական փաստագեղարվեստական գրականության մեջ առկա իսլամացված ու ցեղասպանությունից փրկված հայերի պատմությունների ուսումնասիրություն, մշակում և որոշ հատվածների թարգմանաբար ներկայացում:
- Թուրքական վերլուծական կենտրոնների ուսումնասիրություն:

**Կատարված հետազոտություններից հետևում է, որ.**

- Ներկայիս Թուրքիայի կրոնափոխ հայության գերակշիռ մեծամասնությունը իսլամ է ընդունել պարտադրված՝ կյանքի և մահվան միջև ընտրություն կատարելով:
- Թուրքիայի իսլամացված հայերը ձուլման և ինքնության կորստի տարբեր աստիճաններում գտնվող մարդիկ են, որոնցից ոչ բոլորն ունեն մաքուր հայկական էթնիկ նկարագիր, և նրանց պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ծպտյալ հայեր և իսլամացված հայեր (այս նույն խմբում պայմանականորեն ընդգրկելով հայության խառնածին հետնորդներին):
- Թուրքիայի իսլամացված հայերի խնդրի դիտարկման արդյունքում ի հայտ եկած շատ փաստեր թույլ են տալիս խոսել նրանց շրջանում պահպանված որոշակի ազգային ինքնագիտակցության կամ գոնե հիշողության մասին, ինչը համապատասխան նպաստավոր պայմանների դեպքում տեսականորեն կարող է բավարար հիմք դառնալ նրանց հնարավոր ինքնակազմակերպման գործում:
- Թուրքիայում իրենց գոյությունը պահպանած, ուժացման և ինքնության կորստի տարբեր մակարդակներում գտնվող հայերի մեջ էթնիկ ու կրոնական ինքնագիտակցության տարրերի գնահատման համար պարտադիր և կարևորագույն պայման է հստակ պատկերացնել և հաշվի առնել այն միջավայրը, որտեղ ապրում են նրանք:
- Պետք է հստակ գիտակցել, որ Թուրքիայի իսլամացված հայերի հարցը բազմաշերտ է, ինչն էլ իր հերթին պահանջում է ունենալ համապատասխան մոտեցում, հակառակ պարագայում կարող են ի հայտ գալ ոչ ճշգրիտ եզրահանգումներ: Այս համատեքստում ավելորդ չէ շեշտել նաև, որ Թուրքիայի կրոնափոխ հայերի տարբեր շերտերի միջև համահավասարեցման նշան դնելով չարդարացված լավատեսական կամ, հակառակը, մերժողական մոտեցում որդեգրելը հավասարապես սխալ է ու ոչ գիտական: Պետք է գիտակցել, որ ունենք մշակութային, լեզվական, կրոնական առումով տարբեր մի զանգված, որն ունի հայկական արմատներ և որ, ամենկարևորն է, հետաքրքրվում է իր արմատներով, փորձում ճանաչել ինքն իրեն: Հարկ է նկատել, որ կարող են տարբեր լինել դեպի այդ արմատները կամ դրանց կարևորումը տանող ճանապարհները:
- Ծպտյալ և իսլամացված հայության խնդիրը, բնականաբար, հետաքրքրում և որոշակի անհանգստություն է պատճառում նաև թուրքական գիտական և «մերձգիտական» շրջանակներին, ու սա են վկայում թեմայի վերաբերյալ օրեցօր ավելացող հոդվածները, գրքերը, ուսումնասիրությունները: Որոշ թուրք գիտնականներ և

վերլուծաբաններ ծպտյալ և իսլամացված հայերին համարում են լուրջ սպառնալիք Թուրքիայի անվտանգության համար և պետական կառույցներին կոչ անում այս ուղղությամբ միջոցներ ձեռնարկել, ինչպես նաև խնդիրը հրապարակ նետելով՝ անհարկի շահարկում են անտրամաբանական գնահատականներ:

- Թուրքական պետական տարբեր կառույցներ ևս հետաքրքրված են ծպտյալ և իսլամացած հայերի խնդիրներով: Թուրքական պետական քարոզամեթենան ամեն կերպ փորձում է շահարկել և հոգուտ իրեն ներկայացնել հարցը:
- Թուրքական հասարակության այսօրվա կարևոր խնդիրներից է ինքնության հարցը: Թուրքիայում տարբեր ժամանակաշրջաններում ձուլման ենթարկված մարդիկ և նրանց սերունդները սկսում են լուրջ կասկածներ ունենալ իրենց էթնիկ պատկանելության վերաբերյալ, որը հետզհետե խորանալով՝ վերածվում է ճգնաժամի: «Ինքնության ճգնաժամնե ունի զարգացման և հանգուցալուծման տարբեր ուղիներ, որոնք շատ հաճախ կապված են լինում ինչպես կոնկրետ անձի, այնպես էլ նրան շրջապատող միջավայրի և հանգամանքների հետ:
- Ժամանակակից թուրք փաստագեղարվեստական գրականության մեջ, հատկապես վերջին շրջանում տպագրված գրքերում, հանդիպում են բավական թվով փաստեր ցեղասպանությունը վերապրածների, բռնի իսլամացվածների մասին, որոնք ուղղակի և անուղղակի խոսում են Թուրքիայի կողմից վարվող Ժխտողական քաղաքականության դեմ: Նմանատիպ փաստերի թարգմանությունը, համապատասխան մշակումը և հայ գիտական շրջանակներին ու հասարակությանը հասու դարձնելը կարևոր է և անհրաժեշտ:
- Թուրքական տեղեկատվական դաշտում (թուրքական մամուլ, վերլուծական պարբերականներ, ինտերնետային կայքեր) իսլամացած և ծպտյալ հայերի խնդիրներին վերաբերող տեղեկությունների համակարգումը թույլ է տվել ձևավորել համապատասխան շտեմարաններ: Համաձայն տեղեկությունների՝ կարելի է եզրակացնել, որ իսլամացված և ծպտյալ հայերի խնդիրը Թուրքիայում անտեսված չէ, և որ այն գտնվում է տեղի պատմաբանների, ինչպես նաև հասարակության ուշադրության կենտրոնում: Ժամանակ առ ժամանակ թուրքական մամուլը ևս անդրադառնում է խնդրին, սակայն կան տարբեր մոտեցումներ՝ ելնելով թերթերի քաղաքական ուղղվածությունից:
- Հարկ է նշել, որ ծպտյալ հայերի թեման դարձել է նաև շահարկման միջոց: Մասնավորապես՝ փորձ է կատարվում ծպտյալ հայերին ներկայացնել որպես ահաբեկիչների՝ անդամակցած ՔԲԿ-ին և այլ քրդական քաղաքական կուսակցությունների: Այս ուղղությամբ անգամ

ստեղծվել էր հատուկ վերկայք, որտեղ մանրամասնորեն հայերի անվանումների (ծննդյան թիվ, ծննդավայր) հետ միասին տրված էին անդամակցող կուսակցությունները:

- Ծպտյալ հայերի խնդրի ի հայտ գալու հետ միասին նկատվում է Թուրքիայում որոշ հայտնի քաղաքական, կրոնական, կրթական, մշակութային գործիչների, և այլ մասնագիտություն ունեցող մարդկանց հայկական ծագում վերագրելու միտումը: Հրապարակ նետված այս փաստերը պարունակում են հստակ քարոզչական ուղղվածություն և էլ ավելի կասկածի տակ դնում դրանց հավաստիության աստիճանը:
- Կարելի է ասել, որ պայմանականորեն անվանված իսլամացված հայության տարբեր խմբերի հանդեպ պետք է ունենալ տարբերակված վերաբերմունք և, որ ամենակարևորն է, սպասումներ: Ազգային գիտակցությունը և շատ հաճախ էթնիկ նկարագիրը պահպանած ծպտյալ հայերի՝ Հայության մեջ վերինտեգրվելու փորձերը և ձգտումները պետք է դրական վերաբերմունքի արժանանան հայաստանյան կողմից: Անհրաժեշտ է կարողանալ հաղթահարել շատ հաճախ օբյեկտիվ պատճառներով կրոնական հենքով տարանջատված Հայության տարբեր շերտերի միջև առաջացած տարբերությունները:
- Իսլամացված հայերի խառնածին հետնորդների մոտ երևույթները տարբեր են. մի մասը հպարտանում է իր հայկական արմատներով և առանձնահատուկ վերաբերմունք սկսում ցուցաբերել դրա հանդեպ, մի մասը փորձում է անտեսել այդ հանգամանքը, որպեսզի հասարակության մեջ չարժանանա գյավուր, թշնամի հայի որակման, իսկ մի մասն ունի նաև հոգեբանական պատճառներով պայմանավորված թշնամական վերաբերմունք հայության քրիստոնյա հատվածի հանդեպ: Մակայն իսլամացված հայերի և նրանց խառնածին հետնորդների գոյությունը չպետք է լիովին մերժել, այլ ընդհակառակը՝ մշակել նաև նրանց հետ հարաբերվելու մեթոդներ կամ գտնել շփման եզրեր:
- Թուրքիայում գործող վերլուծական կենտրոններից ուսումնասիրվել են շուրջ երկու տասնյակ քաղաքական, սոցիալ-տնտեսական ուղղվածությամբ հետազոտություններ կատարող կենտրոններ: Դրանք ունեն իրենց կայքերը, որոնցում ներկայացված են հիմնարկության ներքին հայեցակարգերը, ֆինանսական աղբյուրները (ոչ բոլորը), աշխատակազմի թվաքանակը, գտնվելու վայրը, հրատարակությունները, արտասահմանյան որոշ կազմակերպությունների հետ համագործակցության վերաբերյալ տեղեկությունները: Կենտրոնները տարբեր նպատակներ և խնդիրներ հետապնդող կազմակերպություններ են,

որոնք գլխավորապես զբաղվում են պետական նշանակության ռազմավարական խնդիրների համալիր մշակմամբ:

- Թուրքիայի վերլուծական կենտրոնները հիմնականում սնվում են արտաքին կառույցների ֆինանսական օժանդակությունից, այդ թվում՝ գանազան հիմնադրամներից, Եվրամիության մեջ մտնող կառույցներից, ԱՄՆ կառավարության հատկացրած գումարներից (*Friedrich-Ebert-Stiftung*, «Բաց հասարակությունե հիմնադրամ, Թուրքիայում ԱՄՆ դեսպանություն, Եվրախորհուրդ, «*German Marshall Fund*» հիմնադրամ, գերմանական, հոլանդական որոշ հիմնադրամներ, Համաշխարհային բանկ): Արևմտյան կառույցների կողմից ֆինանսավորվող կենտրոններն իրենց հետազոտական ծրագրերում ավելի մեծ տեղ են հատկացնում ժողովրդավարացման հետ կապված խնդիրներին, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքային մեթոդաբանության ծրագրերին, ազգային փոքրամասնությունների իրավունքների հարցերին և այլն: Ներքին ֆինանսական օժանդակությունը տրամադրվում է առավելապես Թուրքիայի արդյունաբերական կազմակերպությունների, առևտրային պալատի, համալսարանական շրջանակների կողմից:

### ***1.3. «Հայության հիշողության քաղաքականության խնդիրները»***

*Ղեկավար՝ Հարություն Մարության*

#### **Հետազոտությունների ուղղվածությունը.**

- Ցեղասպանության հիշողության քաղաքական օգտագործումների գործնական ուղիների ուրվագծում:
- Հայաստանյան հանրությանը պահանջատիրության հարցերը կոնկրետ հարթության մեջ առաջադրելու և լուծման ուղիներ որոնելու օտարների (մասնավորապես՝ հրեից) փորձի ուսումնասիրում և իրազեկում:
- Ցեղասպանության հիշողության առկա մակարդակի պայմաններում քարոզչական նոր եղանակների, այդ հիշողությունից քաղաքական և գործնական շահ ստանալուն ուղղված ճանապարհների որոնումների շարունակում:
- Հայկական միջազգային ձևաչափերի կազմակերպման գործի աջակցում:
- Արտասահմանյան երկրներում գործող հայագիտական կենտրոնների ուսումնասիրության գործի ձեռնարկում:



- Հայության ինքնության կարևորագույն տարրերի՝ գիտակրթական և տեղեկատվական գործիքների միջոցով քարոզման գործի ձեռնարկում՝ «Ամենաճանաչվածները՝ (պայմանական անվանում) ծրագրի սկզբնավորման եղանակով:
- Միջազգային կենտրոնների կողմից իրականացվող, ուսանողության ու շրջանավարտների մեջ հայագիտական գիտելիքների մակարդակի բարձրացմանն ուղղված հայագիտական հետազոտություններին, գիտարշավներին օժանդակության ուղիների որոնում, իրականացում:
- Միյուրքի նախարարության ձևավորման գործընթացում գիտամեթոդական օժանդակության իրականացում, մասնակցություն Մեծ հայրենադարձության 60-ամյակին նվիրված գիտաժողովի կազմակերպման և անցկացման աշխատանքներին:
- «Հայագիտական կենտրոնի աշխատանքների համակարգում, հրատարակության ներկայացված աշխատանքների խմբագրում:

**Կատարված հետազոտություններից հետևում է, որ.**

- Ցեղասպանության հետևանքով առկա տրավմատիկ հիշողության գործոնը էական նշանակություն ունի Թուրքիայի մահմեդական և ծպտյալ հայերի մեջ հայկական ինքնության պահպանման հարցում, իսկ որոշ դեպքերում այն հայկականությանը կապող միակ օղակն է:
- Ցեղասպանության հիշողության քարոզչության մեջ անհրաժեշտ է ուժեղացնել ցեղասպանության տարիներին հայերի անհատապես, ընտանիքներով, ոչ մեծ խմբերով իրականացրած դիմադրությունների մասին տեղեկատվության ըստ ամենայնի մատուցումը՝ այդ կերպ կոտրելով հայերի անգործության առասպելի դրույթները:
- Հրեական հոլոքոստի փորձի ուսումնասիրությունը հուշում է, որ անհրաժեշտ է ձեռնարկել Հայոց ցեղասպանության պատճառած նյութական կորուստների համար փոխհատուցումների պահանջների ձևակերպման, հիմնավորման և ներկայացման գործը՝ նկատի ունենալով, որ այն երկարատև, անգամ տասնյակ տարիներ տևող գործընթաց է: Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների փոխհատուցումը ոչ մի կապ չունի «արյան գնի» հետ, որը ենթակա չէ վճարման:
- Փոխհատուցման փաստը չի նշանակում ցեղասպանությունն իրականացրած գաղափարախոսությունը կրող ժողովրդի ներկայացուցիչների ներում ցեղասպանությունը վերապրողների կամ ցեղասպանության ենթարկված ժողովրդի կողմից: Երկու կողմերը կարող են ունենալ նորմալ միջպետական հարաբերություններ, միևնույն ժամանակ նման հարաբերությունների առկայությունը կամ

բացակայությունը չի կարող խոչընդոտ դիտվել փոխհատուցման գործընթացի ձևավորման համար:

- Ցեղասպանության հարցերին նվիրված վերլուծական, քարոզչական աշխատանքներում առավելապես պետք է շեշտվի ցեղասպանությունն իրականացրած կողմին առաջնորդող գաղափարախոսության պահը, քան թե այդ կողմի էթնիկ պատկանելության գործոնը:
- Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների համար փոխհատուցումների պահանջների ներկայացման, ստացման ու բաշխման գործի իրականացման համար լավագույն ձևը միջազգային ոչ կառավարական կազմակերպության ստեղծումն է, որը կաշկանդված չէ շահառու հանդիսացող պետության օրենքներով: Այդ մարմինը կարող է լինել նաև հետազոտական-իրավական գործունեություն իրականացնող կառույց, որը պետությունից ստանում է որոշակի իրավասություններ և գործում է դրանց շրջանակներում, միաժամանակ ներկայացնելով ցեղասպանության ենթարկված ժողովրդի աշխարհով մեկ սփռված ժառանգների շահերը:
- Ցեղասպանությանն առնչվող քարոզչական գործունեության մեջ անհրաժեշտ է ընդլայնել «ցեղասպանության զոհերե հասկացության սահմանները: Մասնավորապես, դրանց շարքը պետք է չսահմանափակել միայն ցեղասպանության իրականացման տարիներին զոհվածներով, այլև ընդգրկել նրանց, ովքեր (1) իրենց բնակության վայրերից ենթարկվել են բռնի տեղահանման, (2) տարհանվել են համակենտրոնացման ճամբարներ, (3) բռնի աշխատել են հանքերում, աշխատանքային գումարտակներում և այլուր, (4) ենթարկվել են որոշակի բարոյական կամ այլ բնույթի զրկանքների, հալածանքների, (5) հնարավորություն չեն ունեցել ստանալ համապատասխան կրթություն, զուրկ են եղել մասնագիտական աճի հնարավորություններից և այլն:
- Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների համար փոխհատուցումների պահանջների ներկայացման կազմակերպմանն ուղղված գործունեությունը, բուն իսկ ընթացքը, ինչպես և հրեից պարագայում, Հայության ինքնության համար նույնպես կարող է ունենալ միավորիչ նշանակություն:
- Հայրենադարձության թեմայի պարբերական արձարձման փաստն ինքնին խթան է Հայության մեջ հայաստանակենտրոնության հարցի անընդհատ քննարկման, իսկ այդ հենքով ՀՀ պարագայում ստեղծվելիք հնարավոր միավորումների ու նրանց կողմից իրականացվող գործունեությունը էապես կարող է նպաստել երկրի դրական իմիջի բարձրացմանը, Հայության համախմբմանը:

#### **1.4. «Հայագիտական կենտրոնի 2009թ. աշխատանքային ծրագիրը**

2009թ. Հայագիտական կենտրոնի աշխատանքները կատարվելու են հետևյալ ուղղություններով.

- 1 Վրաստանի և ԱՊՀ հայ համայնքների ուսումնասիրություն
2. Տարադավան, տարալեզու հայության խնդիրներ
3. Գիտության և կրթության դերը ազգակերտման գործընթացում. հետևություններ հայության համար:

Կենտրոնը 2009թ. շարունակելու է Թուրքիայի տարածքում (ինչպես նաև դրանից դուրս) բնակվող և տարբեր ժամանակաշրջաններում իսլամացված հայերի ու նրանց սերունդների վերաբերյալ համալիր հետազոտությունը, որն ընդգրկում է հարցի պատմության, ներկայիս վիճակի, տեղի ունեցող գործընթացների, հավանական զարգացումների մասին ուսումնասիրություններ: Փորձ է արվելու ներկայացնել խնդրի նաև տեսական կողմերը, տալ առկա ենթաշերտերի նկարագրությունը, դրանց տարբերությունները, համակարգել իսլամացված հայության մասին առկա տեղեկատվությունը: Նախատեսվում է հետազոտական աշխատանքներ կատարել Ստամբուլ, ինչպես նաև Գերմանիայի, Հոլանդիայի տարբեր քաղաքներ տեղափոխված կրոնադարձված (քրիստոնեություն վերընդունած) հայության շրջանում:

Ուսումնասիրվելու է նաև դավանափոխ, մասնավորապես՝ Թուրքիայի և Վրաստանի կաթոլիկ հայության խնդիրը (պատմություն, ներկա վիճակ, զարգացումներ, խնդիրներ և այլն): Կազմակերպվելու է գիտաժողով՝ նվիրված կրոնափոխ, դավանափոխ հայության խնդիրներին: Ուսումնասիրվելու են թուրքական վերլուծական կենտրոնները, կատարվելու է թուրքական և ադրբեջանական ԶԼՄ (այդ թվում և հեռուստատեսությունների) մոնիթորինգ: Շարունակվելու է արտերկրի հայագիտական կենտրոնների ուսումնասիրությունը և դասակարգումը:

Հայագիտական կենտրոնի շրջանակներում շարունակվելու է թիֆլիսահայ համայնքի համակողմանի ուսումնասիրությունը, մշակվելու է թիֆլիսահայ համայնքի զարգացման հայեցակարգը (ՀՀ Սփյուռքի նախարարության պատվերով), աշխատանքներ են տարվելու վիրահայ համայնքի զարգացման հայեցակարգի իրականացման ուղղությամբ: Հետազոտական աշխատանքներ են կատարվելու Թիֆլիսում՝ կենտրոնանալով տեղի հայկական դպրոցների հիմնախնդիրների վրա: Կազմակերպվելու է «Նորավանքե ԳԿՀ միջազգային 2-րդ գիտագործնական գիտաժողովը՝ նվիրված Հայկական համայնքների հիմնահարցերին (ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ): Նախատեսվում է գիտաժողովի նյութերի

հրատարակում: Աշխատանքներ են կատարվելու ջավախահայության արդի խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ, որի շրջանակներում հետազոտություններ են արվելու Ջավախքում, ինչպես նաև ջավախահայության շրջանում՝ իրավիճակի համապարփակ պատկերի ձևավորման, ինչպես նաև կիրառական բնույթի առաջարկներ ձևակերպելու նպատակով: Շարունակվելու են արտերկրի հայկական համայնքների վեբկայքերի տվյալների համալիր շտեմարանի ձևավորման աշխատանքները, ինչպես նաև դրանց վերլուծությունը:

2009թ. նախատեսվում է ձեռնարկել «Գիտակրթական գործոնի դերը ազգակերտման գործընթացում. հետևություններ հայության համարե թեմայի ուսումնասիրությունը: Նման թեմայի անհրաժեշտությունը պայմանավորված է այն գիտակցությամբ, որ միայն գիտական համապատասխան հիմնավորմամբ ու կրթական որոշակիորեն ուղղորդված համակարգի առկայությամբ է մեծապես պայմանավորված ազգի առաջընթացի մակարդակը: Այդ գործոնի դերակատարմամբ այլոց փորձի նրբերանգների իմացությունը կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև Հայության պարագայում: Ըստ այդմ, տարվա ընթացքում խնդիր է դրվում ծանրանալ գերազանցապես հրեից փորձի ուսումնասիրությանը, քանի որ հայոց ու հրեից պարագայում առկա են մեծ քանակությամբ որակական բնույթ ունեցող զուգահեռներ հենց ազգակերտման գործընթացում:

### ***1.5. «Հայագիտական կենտրոնի գարգացման տեսլականը***

#### **Իրավիճակը.**

Կենտրոնի շրջանակներում տարվող աշխատանքներն իրագործվում են երեք ծրագրերի միջոցով՝ «Հայության, մասնավորապես հայ համայնքների անվտանգության խնդիրները», «Այլադավան, այլալեզու Հայության և մասնավորապես Թուրքիայի իսլամացված հայերի խնդիրները և «Հայության հիշողության քաղաքականության խնդիրները»:

Կենտրոնի աշխատակիցներն իրենց հետազոտություններում և տարբեր ձևաչափերի հրապարակումներում անդրադառնում են Հայության արդիական հնչողություն ունեցող իրողություններին: Մասնավորապես, ուշադրության կենտրոնում են Վրաստանի (հատկապես Թբիլիսիի) հայության շրջանում ընթացող գործընթացները, կապեր են պահպանվում ՌԴ հարավային շրջանների հայկական համայնքների որոշ շրջանակների հետ, տարվում են ինտենսիվ աշխատանքներ արտերկրի հայկական համայնքների վեբկայքերի տվյալների համալիր շտեմարանի ձևավորման ուղղությամբ: Մեծ ուշադրություն է նվիրվում Թուրքիայի մահմեդական հայության ներկա

վիճակին, հետազոտվում է թուրքական վերլուծական կենտրոնների գործունեությունը: Հրեական փորձի ուսումնասիրությամբ փորձեր են արվում մշակել Հայության կազմակերպման համար հիշողության քաղաքականության որոշ հարցադրումներ:

«Հայագիտական կենտրոնի ստորև շարադրված տեսլականի կարևորագույն առանձնահատկությունը, մեր կարծիքով, այն է, որ այստեղ առաջ քաշվող հարցադրումները և առաջարկվող լուծումները, որքան մեզ հայտնի է, ՀՀ տարածքի ոչ մի այլ գիտահետազոտական կամ գիտամանկավարժական հաստատությունում նման համակցությամբ չեն առաջադրվում, կարծես թե դրա միտումներն էլ չեն նկատվում: Ռեսուրսների սակավության իրողությունը թելադրում է ցանցակենտրոն մեթոդաբանության օգտագործման ու այդպիսով ռեսուրսների մոբիլիզացման, համախմբման անհրաժեշտությունը: Կարևոր հանգամանք է և այն, որ առայսօր ՀՀ ԳԱԱ-ն չունի հայագիտության զարգացման ռազմավարության վերաբերյալ որևէ փաստաթուղթ, առկա են լոկ հայագիտության ոլորտի ինստիտուտների գործունեության հնգամյա պլաններ: Մինչդեռ ստրատեգիայի պոստուլատներից մեկը հուշում է, որ եթե չունես սեփական ռազմավարություն, նշանակում է՝ մեկ ուրիշի ռազմավարության օբյեկտ ես: Ստորև առաջ քաշվող գիտագործնական բնույթ ունեցող խնդիրները, կարծում ենք, էապես համահունչ և անհրաժեշտ են ոչ միայն ազգային շահերին ծառայող հայ ազգային գիտությանը, այլև անհրաժեշտ են Հայության անվտանգության քաղաքականության տեսանկյունից և բխում են «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի գործունեության բնույթից:

#### **Կենտրոնի տեսլականի հիմնական դրույթները.**

Հայկական Մփյուռքը միատարր օրգանիզմ չէ, տարբեր համայնքներ ունեն իրենց առանձնահատկությունները, ուստի Մփյուռքի ուսումնասիրման հիմքում պետք է ընկած լինի տարբերակված մոտեցումը:

Ժամանակակից Մփյուռքի համեմատաբար համապարփակ պատկերի ձևավորման համար կարևոր է.

- *հայկական համայնքների ներուժի գնահատումը,*
- *ԱՊՀ տարածքի հայ համայնքների իրավիճակի ուսումնասիրությունը, հայագիտական կենտրոնների գործունեության ուսումնասիրությունը, նրանց ռեսուրսների օգտագործման ուղիների հնարավորությունների որոնումը, համատեղ իրականացման ենթակա խնդիրների առաջքաշումը:*

Նշված աշխատանքների իրականացումը մեթոդաբանական առումով ենթադրում է.

- Մփյուռքի նախարարության աջակցությամբ «Նորավանքե ԳԿՀ մասնաճյուղերի ստեղծում Մփյուռքում: Նման մասնաճյուղերը, համագործակցելով տեղի դեսպանատների հետ, միևնույն ժամանակ կարող են գործել այն ոլորտներում, որոնցում դիվանագետների գործունեությունը, հայտնի պատճառներով, նպատակահարմար չէ:

Մասնաճյուղերի գործունեության հիմնական նպատակներն են լինելու. ա) հաշվառել տվյալ երկրի (տարածաշրջանի) հայկական համայնքների ռեսուրսները և հնարավորինս ուղղորդել դրանք Հայաստանի և Հայության շահերի համատեքստում, բ) ներկայացնել համայնքներին ՀՀ-ում և ԼՂՀ-ում ընթացող քաղաքական գործընթացների վերաբերյալ վերլուծություններ և կազմակերպել համայնքների իրավիճակի վերլուծաբանական լուսաբանումը հայաստանյան ԶԼՄ-ում՝ այդ կերպ նպաստելով Հայաստան-Մփյուռք միասնական տեղեկատվական դաշտի ձևավորմանը, գ) կամուրջ ստեղծել Մփյուռքի և ՀՀ պետական կառույցների, գիտական, ուսումնական և այլ հաստատությունների միջև:

Կարծում ենք, որ առաջին փուլում անհրաժեշտ է մասնաճյուղեր հիմնել Մերձավոր Արևելքում (Բեյրութ) և Ռուսաստանում (Մոսկվա): «Նորավանքի» արտասահմանյան մասնաճյուղերի գործունեությունը պետք է իրականացվի Հիմնադրամի, ՀՀ Մփյուռքի նախարարության և Մփյուռքի կառույցների ֆինանսավորման միջոցով (հիմնական ծախսերի մասին տե՛ս Հավելված):

- հայ համայնքների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների բազայի ստեղծում,
- օն-լայն կոնֆերանսների անցկացում:

Այլադավան, այլալեզու Հայության և, մասնավորապես, Թուրքիայի իսլամացված հայերի խնդիրների համակողմանի հետազոտման համար անհրաժեշտ է նկատվում.

- տեղեկատվական նպատակաուղղված աշխատանքների միջոցով Հայության լայն շերտերի մեջ տարածել, որ պատմական տարբեր իրադարձությունների հետևանքով մենք ներկայումս ունենք կրոնով, մշակույթով, լեզվով, կենցաղով մեզնից տարբերվող Հայություն կամ հայկական ծագում ունեցող մարդկանց շերտ, որոնց գոյությունը փաստ է և պետք է սրա հետ հաշվի նստել: Այս «կապիտալը պետք է տարբեր մեթոդներով ընդգրկել հայկական կենսագործունեության ոլորտ: Կարևոր է, որ պետական կառույցները և հանրությունը այլա-

կրոն հայերի խնդրի նկատմամբ որդեգրեն նուրբ և զգույշ մոտեցում: Մասնավորապես, հարցի նուրբ կողմերից է այն հանգամանքը, որ Թուրքիայում ապրող շատ կրոնափոխ հայեր ունեն այն հստակ գիտակցությունը, որ իրենք բնակվում են իրենց հայրենիքում:

- Թուրքիայում ու Եվրոպայում բնակվող հայկական ծագում ունեցողների այլ խմբերի հետ պետք է տանել աշխատանքներ՝ ցույց տալու համար Հայության այդ շերտերի լեզվական, մշակութային, բանահյուսական ընդհանրությունները և նմանությունները: Այս հարցում կարող են օգտակար լինել ինչպես համատեղ գիտաժողովները և դրանց մասին տեղեկատվության ըստ ամենայնի տարածումը, նույնպես և ժողովրդական երգի-պարի համույթների ելույթները նրանց բնակության վայրերում, փոխադարձ այցելությունների կազմակերպումը, կրոնափոխ հայերին հայաստանյան մշակույթին ծանոթացումը և այլն:

Հայության ու, մասնավորապես, Սփյուռքի հայոց ինքնության պահպանության գործում մեծագույն նշանակություն ունի Հայոց ցեղասպանության հիշողության գործոնը: Հայաստանի պարագայում 1988-90թթ. Ղարաբաղյան շարժման, ապա նաև Ղարաբաղյան ազատագրական պատերազմի արդյունքում ցեղասպանության հիշողության մեջ մեծապես հաղթահարվեց զոհի կարծրատիպը, ինչը չի կարելի ասել սփյուռքահայոց պարագայում: Երկու դեպքում էլ անհրաժեշտություն է նկատվում մշակել այդ հիշողության քաղաքական նպատակներով օգտագործման գործնական ուղիներ: Մասնավորապես, խնդիր է դրվում.

- ձեռնամուխ լինել ցեղասպանության հիշողության ռազմավարության մշակմանը,
- ցեղասպանության հիշողության հարցում առկա տրավմատիկ հիշողության գործոնը զուտ կորստի հիշողության համատեքստից տեղափոխել պայքարի, կռվի, տարբեր ընդգրկումներով մղված ինքնապաշտպանության քարոզչության բնագավառ ու այդպիսով նպաստել նոր, համեմատաբար նվազ տրավմատիկ երանգներ պարունակող հիշողության ու ինքնության ձևավորմանը: Այդ գործում ուղղակիորեն մեծ ավանդ կարող է ունենալ «Նորավանքե ԳԿՀ-ի կողմից իրականացվող «Մեր հաղթանակները ծրագիրը,
- հետազոտել օտարների (հատկապես հրեաների) փորձը ցեղասպանության իրողությունից քաղաքական դիվիդենտներ ստանալու ուղղությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է դիտվում ձեռնարկել ցեղասպանության պատճառած նյութական կորուստների համար փոխհատուցումների պահանջների ներկայացման տեսական

հիմնավորման և գործնական ուղիների մշակման գործը: Մա կարող է լինել նաև այն հանգրվանը, որը ևս մեկ, այս անգամ հոգևոր և գործնական բնույթի թելերով կարող է միմյանց կապել Հայության տարբեր հատվածները:

Առաջարկվում է.

- իրականացնել մասնագիտական կարճատև և երկարատև գործուղումներ Իսրայել, ինչպես նաև Հոլոքոստի հետազոտության կենտրոններ վերոնշյալ խնդիրների շուրջ առկա փորձին ծանոթանալու նպատակով,
- ՀՀ հրավիրել նշված խնդիրների շուրջ մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող փորձագետների, նրանց մասնակցությամբ կազմակերպել աշխատանքային սեմինարներ:

Հայոց պատմական հիշողության առկա կառույցին թարմ լիցք կարող է հաղորդել ինչպես գիտակրթական, այնպես էլ տեղեկատվական անվտանգության տեսանկյունից էական դիտվող «Ամենաճանաչվածները (պայմանական անվանում) ծրագրի իրագործումը: Այն ենթադրում է ստեղծել համահայկական ընդգրկմամբ գիտա-մշակութաքաղաքական վիրտուալ դաշտ, ուր առկա գիտահանրամատչելի, դրական ձևով արժևորված տեղեկատվությունը մեծապես կարող է նպաստել հայրենասիրական ոգով դաստիարակությանը, լիարժեք ու կայացած քաղաքացու ձևավորմանը: Հայոց պատմության և մշակույթի մեջ նշանակալի դեր խաղացած յուրաքանչյուր անհատի շուրջ ծավալվող համացանցային և հեռուստաքննարկումները տեղեկատվական իմաստով մեծապես օգտակար կլինեն Հայության ներսում ինքնաճանաչողության մակարդակի բարձրացմանը, Հայության առանձին հատվածների միջև կապերի սերտաճմանը:



## 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Ղեկավար՝ Սևակ Սարուխանյան

*2008թ. մարտին ձևավորված «Նորավանքե ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնը ներառում է երեք ուղղություն՝ «Տարածաշրջանային անվտանգություն», «Էներգետիկ անվտանգություն» և «Հայաստանը գլոբալ աշխարհում»:*

*Կենտրոնում աշխատում է 4 մասնագետ, այդ թվում՝ 2 գիտությունների թեկնածու: 2008թ. ընթացքում «Նորավանքե ԳԿՀ «Քաղաքական հետազոտությունների կենտրոնի» աշխատանքների շրջանակներում կատարվել են թվով 188 աշխատանքներ, որից 113-ը՝ ծրագրի աշխատակիցների, իսկ 58-ը՝ ծրագրի հետ շարունակաբար համագործակցող (ասոցիացված) հետազոտողների, 17-ը՝ այլ փորձագետների կողմից (տե՛ս Հավելված 2): Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են 10 գիտաժողովների, այդ թվում 2 զեկույցումներով՝ միջազգային գիտաժողովներում:*

Կենտրոնի նպատակն է ի մի բերել հիմնադրամի շրջանակներում տարվող քաղաքագիտական բնույթի հետազոտությունները, դրանք դարձնել առավել համակարգված և ուղղորդել գերազանցապես գիտագործնական ուղղությամբ, ուղիներ նախանշել Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների ինտենսիվացման: Կենտրոնի խնդիրներն են՝ ձևավորել համարժեք պատկերացումներ գլոբալ և տարածաշրջանային գործընթացների վերաբերյալ: Մշակել Հայաստանի ազգային անվտանգությանն առնչվող տարածաշրջանային ռազմաքաղաքական հնարավոր զարգացումների սցենարներ, նախագծեր, իրագրել Հայաստանի ընտրանուն և հանրությանը տարածաշրջանային ռազմաքաղաքական իրավիճակի շուրջ առկա փորձագիտական գնահատականներին, ձևավորել համարժեք պատկերացումներ գլոբալ և տարածաշրջանային էներգետիկ գործընթացների և զարգացումների վերաբերյալ, մշակել Հայաստանի անվտանգությանն առնչվող տարածաշրջանային էներգետիկ զարգացումների սցենարներ, նախագծեր, նպաստել Հայաստանում էներգետիկ քաղաքականությանն ու անվտանգությանն առնչվող հետազոտությունների իրականացմանը, ուսումնասիրել Հայաստանի, ինչպես և ԼՂՀ միջազգային վարկանիշին վերաբերող վիճակագրական հետազոտությունները, որոնք ներկայացվում են տարբեր հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից՝ տարեկան հաշվետվությունների կամ զեկույցների տեսքով:

Քաղաքական հետազոտությունների կենտրոնի գործունեության հիմնական ձեռքբերումներն ամփոփված են «Հետևությունները բաժնում: Հետազոտությունները կատարվել են հետևյալ ուղղություններով.

### ***2.1 «Տարածաշրջանային անվտանգությունը ծրագրի հիմնական բովանդակային արդյունքները***

**Հետազոտությունների նպատակը.**

- Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից տարածաշրջանի ռազմաքաղաքական պատկերի, դինամիկայի ***գնահատում***,
- տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումների վերաբերյալ ***կանխատեսումների***՝ սցենարային տարբերակով պատրաստում,
- հիմք ընդունելով ստացված ***գնահատականները*** և ***կանխատեսումները***՝ Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը նպաստող ***առաջարկությունների*** (մշակումների) ներկայացում,
- Հայաստանի ընտրանուն և հանրությանը հետազոտությունների արդյունքների իրազեկում:

**Միջազգային քաղաքականություն.**

Անցած տարվա ընթացքում միջազգային քաղաքականությունում տեղ գտած հիմնական տեղաշարժը ***բազմաբևեռ աշխարհակարգի*** ձևավորման հավանականության հարցից անցումն էր այն կետին, թե ինչ տեսք կունենա համակարգն առաջիկայում: Նշված տեղաշարժը նշանակում է, ա) որ բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորումը կասկածից դուրս է հայտնվել բ) և որ Մառը պատերազմի ավարտից ի վեր գործող միջազգային քաղաքականության տրամաբանությունը, հետևաբար՝ փոխդասավորվածությունը փոփոխության շեմին են:

Գործընթացը առաջին հերթին արտահայտվում է Միացյալ Նահանգների շարունակվող նահանջով գլոբալ մենաստիրական դիրքերից, որի հիմնական պատճառներից են՝

- միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի քաղաքական, գաղափարախոսական և բարոյական կորուստները կրում է Միացյալ Նահանգները՝ որպես 1944թ. հիմնադրված ու մինչ օրս միջազգային տնտեսական կառույցի փաստացի տրամաբանությունը հանդիսացող Բրեթոն Վուդս համակարգի հեղինակ, և որի այսօրվա դինամիկան տանում է միջազգային ֆինանսատնտեսական համակարգում ամերիկյան ազդեցության նվազմանը,
- ԱՄՆ անհաջողությունները միջազգային քաղաքականության կարևոր ուղղություններից երկուսում՝ Մերձավոր Արևելք (իրաքյան կամպա-

նիա, Իրան, Իսրայելա-պաղեստինյան հակամարտություն) և հետխորհրդային տարածք (ՆԱՏՕ-ին Ուկրաինայի և Վրաստանի անդամակցության հարցը), ինչը Վաշինգտոնի համար անվերահսկելի գործընթացների սկիզբ է հանդիսացել ամերիկյան գլոբալ քաղաքականության համար առանցքային հանդիսացող անդրատլանտյան հարթությունում:

Թեև այսօր էլ ԱՄՆ-ը շարունակում է հանդիսանալ մտավոր ու նյութական ռեսուրսներ ունեցող առաջատար տերություն, սակայն փաստն այն է, որ Վաշինգտոնում ամրագրվում է այն դրույթը, որ անհնար է միակողմանիորեն փոփոխություններ մտցնել թե՛ գլոբալ քաղականությունում, թե՛ տարածաշրջանային փոխդասավորվածություններում, ինչպես որ ենթադրվում էր 1990-ական թթ.<sup>1</sup>:

Գալիք տարի և կարճաժամկետ հեռանկարում միջազգային քաղաքականության վրա առաջնային ազդեցություն է թողնելու ներկայացված գործոնը՝ *ԱՄՆ և ուժի այլ կենտրոնների միջև պայմանավորվածությունների գործընթացը*<sup>2</sup>: Ընդ որում, միջազգային փոխդասավորվածությունում տեղի ունեցող շարժերի, նավթի, բնական գազի ու պարենային ապրանքների գների կողքին կարող է կրկին որպես կարևոր գործոն հանդես գալ *գաղափարախոսությունների մասը*:

**Հայաստանի պարագայում** պետք է առանձնացնել այն, որ առկա դինամիկան մեզ համար ստեղծում է առայժմ անկանխատեսելի գործընթաց՝ կապված տարածաշրջանային հետագա փոխդասավորվածության հետ: Արցախի հարցի շուրջ տեղի ունեցած վերջին ակտիվացումը դրա վկայությունն է:

### **Արցախի հարց**

Չնայած Արցախի հարցի առնչությամբ կարևոր հանդիսացող երկու գործոններ (Ադրբեջանի տնտեսական կարողությունների աճը, ՆԱՏՕ-ին Վրաստանի ենթադրվող անդամակցությունը) կարճատև հեռանկարում չեն ունենա նախկին ազդեցությունը (նավթի միջազգային գնի անկման և ՆԱՏՕ-ին անդամակցելու Թբիլիսիի անհաջողության հետևանքով), սակայն հատկապես գալիք տարի Արցախի հարցի առնչությամբ կարող է նոր սրությամբ հանդես գալ ուժերի տարածաշրջանային փոխդասավորվածության հարցը: Հայտնի է, որ ԼՂՀ-ի շուրջ գոյություն

<sup>1</sup> 2008թ. նոյեմբերի 20-ին հրապարակված ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի (National Intelligence Council) պատրաստած «Գլոբալ միտումներ 2025. ձևափոխված աշխարհ» (Global Trends 2025: a Transformed World) զեկույցը ներկայանում է հենց այդ տրամաբանությամբ:

<sup>2</sup> 2008թ. նոյեմբերի 26-ին Մուսրայում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները և նրանց աշխարհաքաղաքական հետևանքները հարկ է ընկալել հենց այս տրամաբանության ներքո:

ունեցող *status quo*-ն կարող է փոխվել այն դեպքում, երբ Հարավային Կովկասում ներկայացված ուժի կենտրոններից մեկը կամ մի քանիսը ի վիճակի լինեն փոխել տարածաշրջանային փոխդասավորվածությունը:

### **Հարավկովկասյան զարգացումներ**

2008թ. զարգացումների ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ տարածաշրջանը գտնվում է ձևափոխման շեմին: Այդ առումով կարևոր ենք համարում առանձնացնել հետևյալ կետերը:

**ա/** Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ակտիվացումն ի վիճակի է ամենից լուրջ տեղաշարժերն առաջացնել տարածաշրջանային փոխդասավորվածության մեջ: Երկկողմ շփումների գործընթացը հասել է մի կետի, որ չնայած չենք կարող հստակորեն սահմանել Երևան-Անկարա հարաբերություններում փաստացի փոփոխությունների ժամանակահատվածը, սակայն կարող ենք նշել, որ գործընթացից դուրս գալը կողմերից որևէ մեկի համար կարող է ավելի շատ բացասական, քան դրական արդյունք ունենալ: 2007թ. Հրանտ Դինքի սպանության, Թուրքիան հույներից ու հայերից «մաքրելու» պաշտպանության նախարար Վեջդի Գոնուլի հայտնի հայտարարության (նոյեմբերի 10, 2008թ.) և Եղեռնի կապակցությամբ հայերից ներողություն խնդրելու թուրք մտավորականության ձեռնարկած ինտերնետային ստորագրահավաքի շուրջ թուրքական առաջատար ԶԼՄ ցուցաբերած տեղեկատվական ակտիվությունը թույլ է տալիս ենթադրել, որ ***Էրդողանի կառավարությունը նախապատրաստում է թուրքական հանրությանը Հայոց ցեղասպանության փաստի ճանաչմանը*** (սկզբանական շրջանում միգուցե հասարակական մակարդակում) կամ Թուրքիայում Եղեռնի ճանաչման լեգիտիմացմանը:

**բ/** ՆԱՏՕ-ին անդամակցելու Թբիլիսիի անհաջողությունից և մոտ ապագայում այդ տարբերակի անհեռանկարայնությունից, ինչպես նաև Աբխազիայի ու Հարավային Օսիայի կորստից հետո տարածաշրջանի հեռանկարի առումով կարևոր են դառնում Վրաստանի արտաքին ու հատկապես ներքին քաղաքականության մեջ տեղի ունեցող զարգացումները: 2008թ. օգոստոսին տեղի ունեցած վրաց-ռուսական պատերազմից հետո վրացական ընտրանին, հանրությունն ու հետևաբար՝ քաղաքականությունը մուտք են գործել ձևափոխման փուլ: Ներկայում հնարավոր չէ վստահաբար ասել, թե ուր կտանի գործընթացը, սակայն հստակ է, որ ***«նոր» Վրաստանի ձևավորումը*** կարող է ազդեցություն ունենալ հարավկովկասյան քաղաքականության վրա:

**գ/** Չնայած արցախյան *status quo*-ում փոփոխությունների բացակայությանը, շարունակում է կարևոր մնալ այն հարցը, թե գալիք տարի ուժերի ինչ փոխդասավորվածություն մենք կտեսնենք Բաքվում,

երբ հասկանալի դառնա ամերիկյան նոր վարչակազմի քաղաքականությունը տարածաշրջանում: Այսօր պարզ է այն, որ *վրաց-ռուսական պատերազմից հետո Բաքվի համար դժվար կլինի վարել նախկին արտաքին քաղաքականությունը:*

### **Մերձավորարևելյան զարգացումներ**

Մերձավոր Արևելքին առնչվող զարգացումների շարքում մեզ համար հատկապես կարևոր է առանձնացնել իրաքյան Քուրդիստանի հանգամանքը: Հայտնի է, որ Վաշինգտոնի ու Բաղդադի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, մինչև 2011թ. վերջ ամերիկյան զորքերը թողնելու են Իրաքը: Այդ պարագայում էական է դառնում իրաքյան Քուրդիստանի հարցը, որովհետև *հաստատապես պնդել, թե առանց ամերիկյան ռազմուժի ներկայության Բաղդադի կենտրոնական կառավարությանը հատկապես երկարատև հեռանկարում կհաջողվի պահպանել Իրաքի միասնությունը, առնվազն կասկածելի է թվում:*

### **2.2 «Էներգետիկ անվտանգությունն ծրագրի հիմնական բովանդակային արդյունքները**

#### **Հետազոտությունների ուղղվածությունը**

- ձևավորել համարժեք պատկերացումներ գլոբալ և տարածաշրջանային էներգետիկ գործընթացների և զարգացումների վերաբերյալ,
- մշակել Հայաստանի անվտանգությանն առնչվող տարածաշրջանային էներգետիկ զարգացումների սցենարներ, նախագծեր,
- նպաստել Հայաստանում էներգետիկ քաղաքականությանն ու անվտանգությանն առնչվող հետազոտությունների իրականացմանը:

#### **Արդյունքները**

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետազոտություններ՝ նվիրված Հայաստանի և տարածաշրջաային էներգետիկ քաղաքականությանը: Գործունեության հիմնական ուղղություններից է եղել էներգետիկ գործընթացների մոնիթորինգի իրականացումը, որը որակական հիմք է ստեղծում վերլուծությունների իրականացման համար:

2008թ. մարտին ստեղծված ծրագիրն իր աշխատանքների մեջ հաջողությամբ ընդգրկել է հայաստանյան մի շարք վերլուծաբանների, որոնց հետ համագործակցության արդյունքում ծրագրի կողմից հրատարակվող «Գլոբուս էներգետիկ անվտանգությունն տեղեկագիրը դարձել է էներգետիկ հիմնախնդիրներին նվիրված առաջատար պարբերական: 2009 թվականից նախատեսվում է բարձրացնել

Տեղեկագրում հրատարակվող նյութերի որակը և դրանք դարձնել ավելի մատչելի հանրության և փորձագետների համար:

Անցած տարվա ընթացքում ծրագրի կողմից իրականացվող հետազոտությունների կենտրոնում են եղել Հարավային Կովկասում և Կասպից ծովի տարածաշրջանում ընթացող էներգետիկ գործընթացները: Դրանք հետազոտվել են Հայաստանի էներգետիկ և ռազմավարական դիրքերին իրենց հնարավոր ազդեցության տեսակետից: Ուսումնասիրվել է Ադրբեջանի էներգետիկ քաղաքականությունը, որը դիտարկվել է որպես տարածաշրջանում Բաքվի դիրքերի ամրապնդման միջոց, վերլուծվել են Վրաստանում տեղի ունեցող զարգացումները և իրանական գազը Հարավային Կովկաս արտահանելու հարցերը:

Մեծ ուշադրություն է դարձվել վրաց-ռուսական ռազմական ընդհարմանը, և մի շարք հետազոտություններ նվիրվել են հակամարտության՝ տարածաշրջանային էներգետիկ գործընթացների վրա հնարավոր ազդեցության հարցերին:

Ծրագրի հետազոտական աշխատանքների արդյունքում ձևավորվել են որոշակի պատկերացումներ տարածաշրջանային էներգետիկ զարգացումների վերաբերյալ, որոնց հիմնական հետևություններ կարելի է համարել.

- տարածաշրջանային էներգետիկ գործընթացները թևակոխել են իրենց ինստիտուցիոնալացման շրջանը, ինչը գործընթացների հիմնական դերակատար է դարձնում ոչ միայն ազգային պետություններին, այլ նաև արտասահմանյան ընկերություններին, որոնք ներգրավված են տարածաշրջանային էներգետիկ նախագծերի մեջ,
- տարածաշրջանի համար այսօր կարևորագույն խնդիր է Թուրքմենստանի հնարավոր միացումը Տրանսկասպյան գազատարի կառուցման նախագծին, որը կարող է Ադրբեջանին ու Վրաստանին մի կողմից՝ դարձնել խոշոր տարանցիկ գոտիներ, իսկ մյուս կողմից՝ նրանց էլ ավելի ընդգրկել էներգակիրների շուրջ ընթացող պայքարի մեջ,
- այս պարագայում Հայաստանի համար կարևորագույն նշանակություն են ունենալու Ռուսաստանի հետ էներգետիկ համագործակցության կայունության պահպանումը և այլընտրանքային էներգետիկ նախագծերը: Այստեղ պետք է նշել թե՛ հայ-իրանական էներգետիկ համագործակցության ամրապնդման անհրաժեշտությունը, թե՛ այլընտրանքային էներգետիկայի զարգացման նպատակահարմարությունը,
- միևնույն ժամանակ, վրաց-ռուսական ռազմական հակամարտության հնարավոր ազդեցությունը տարածաշրջանային էներգետիկ գործընթացների վրա մինչև վերջ ուսումնասիրված չէ, և հետագա

գործընթացները հիմք կհանդիսանան ավելի ընդհանրական հետազոտությունների անցկացման համար:

### **2.3 «Հայաստանը գլոբալ աշխարհում»**

**Թեմայի շրջանակներում իրականացվող հետազոտությունների նպատակները**

- Ուսումնասիրել Հայաստանի, ինչպես և ԼՂՀ միջազգային վարկանիշին վերաբերող վիճակագրական հետազոտությունները, որոնք ներկայացվում են տարբեր հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից՝ տարեկան հաշվետվությունների կամ զեկույցների տեսքով:
- Այդ հետազոտությունների վերլուծությամբ համադրել Հայաստանի միջազգային վարկանիշը (ԼՂՀ միջազգային վարկանիշը միջազգային սուբյեկտ չհանդիսացող այլ հանրապետությունների հետ) ԱՊՀ անդամ պետությունների, Արևելաեվրոպական/Կենտրոնական Եվրոպայի ու բալթյան երկրների, Հայաստանին հարակից ԱՊՀ անդամ երկիր չհանդիսացող պետությունների հետ:
- Վիճակագրական վերլուծությունների ընդհանրացման արդյունքում ստեղծել Հայաստանի (նաև ԼՂՀ) միջազգային վարկանիշի տեղեկատվական բազա, որը թույլ կտա տեղեկատվական-քարոզչական արդյունավետ գործունեություն իրականացնել ՀՀ միջազգային վարկանիշի բարձրացման ուղղությամբ ինչպես Հայաստանի հասարակական-քաղաքական շրջանակներում (նաև ԼՂՀ-ում), այնպես էլ ՀՀ սահմաններից դուրս:

#### **Հիմնական բովանդակային արդյունքները**

2008թ. տարեկան հաշվետվության շրջանակներում «Հայաստանը գլոբալ աշխարհում» վարկանիշային հետազոտությունների շարքում իրականացված աշխատանքների արդյունքում հանգել ենք այն եզրահանգման, որ տարբեր միջազգային վարկանիշային կազմակերպությունների կողմից հրատարակվող տարեկան զեկույցներում Հայաստանի միջազգային վարկանիշը ԱՊՀ երկրների շարքում լավագույն կամ առաջատար դիրքեր է զբաղեցրել: Ասենք ավելին, Հայաստանի վարկանիշային արդյունքները մոտ են գտնվել մասնավորապես մերձբալթյան, Արևելյան Եվրոպայի երկրների համապատասխան ցուցանիշներին: Կատարված ուսումնասիրությունները, որոնք թեմատիկ առումով չեն եղել միատարր, թույլ են տալիս հաստատել, որ ըստ միջազգային հեղինակավոր վարկանիշային կազմակերպությունների վիճակագրության, Հայաստանը հիմնականում պահպանել և բարելավել է իր միջազգային վարկանիշը

նախորդ տարիներին արձանագրած համապատասխան ցուցանիշների զարգացման դինամիկայի համեմատությամբ: ԱՊՀ երկրների շարքում Հայաստանի միջազգային վարկանիշին համընթաց են եղել հատկապես Ուկրաինայի ու Վրաստանի արդյունքները: Ադրբեջանը, որպես կանոն, ԱՊՀ անդամ պետությունների շարքում իր վարկանիշային ցուցանիշներով զբաղեցրել է վերջին դիրքերը, իսկ լավագույն դեպքում՝ միջին հատվածը: Հայաստանին հարակից երկրներից Հայաստանի վարկանիշային արդյունքների հետ համեմատելի են եղել նաև Թուրքիայի համապատասխան ցուցանիշները (Հայաստանի համադրությամբ զգալի վարկանիշային տարբերություն կա Իրանի պարագայում՝ հոգուտ առաջինի):

Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտություններն ընդգրկված են Հավելված 2-ում՝ ըստ թեմաների:

#### ***2.4. «Քաղաքական հետազոտությունների կենտրոնի» 2009թ. գործունեության ծրագիրը***

2009թ. հետազոտությունները նախատեսվում է իրականացնել 4 հիմնական ուղղություններով. տարածաշրջանային անվտանգություն, էներգետիկ անվտանգություն, իսլամական գործոնը տարածաշրջանում, «Հայաստանը գլոբալ աշխարհում» վարկանիշային գնահատականների ուսումնասիրություն:

##### **Տարածաշրջանային անվտանգություն**

«Տարածաշրջանային անվտանգության» ծրագրի հիմնական նպատակն է հետազոտական աշխատանքների հիման վրա՝ Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից տարածաշրջանում (Հարավային Կովկաս, Թուրքիա, Իրան) առկա իրավիճակի, դինամիկայի ***գնահատում***, տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ ***կանխատեսումների*** պատրաստում, հիմք ընդունելով ստացված ***գնահատականները*** և ***կանխատեսումները***՝ Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը նպաստող ***առաջարկությունների*** (մշակումների) ներկայացում:

Նախատեսվող մակարդակի գնահատականներ, կանխատեսումներ և մշակումներ ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանի առնվազն առաջնային ցուցիչների, գործընթացների շարունակական և համալիր մոնիթորինգ: Միայն նման կարգի հետազոտությունները թույլ կտան հասկանալ տարածաշրջանում տեղ գտնող առանձին իրադարձությունները, զարգացումները և ստանալ իրականությանը հնարավորինս մոտ պատկերացումներ:



Ներկայացվածի հիման վրա պետք է իրականացվեն՝ Վրաստանի, Ադրբեջանի, Իրանի, Թուրքիայի քաղաքական, տնտեսական, ռազմական և էթնոդավանական պատկերի (առաջնային ցուցիչների) մոնիթորինգ և վերլուծություն:

Հաշվի առնելով ծրագրի շրջանակներում առկա մշտական ռեսուրսների սահմանափակ բնույթը՝ տնտեսական ու ռազմական, ինչպես նաև իրավիճակից բխող այլ ուղղություններին (հարցերին) առնչվող հետազոտությունները նախատեսվում է պատվիրել:

Տարածաշրջանային պատկերի (մատրիցայի) համալիր նկարագիրը ձևավորելու համար նախատեսվում է ամսական իրականացնել ներքին կլոր սեղան-քննարկումներ, որոնցում կներկայացվեն մատրիցայի քաղաքական, տնտեսական, ռազմական, էներգետիկ, էթնոդավանական և ռեյթինգային ոլորտներին առնչվող մոնիթորինգի արդյունքները, վերլուծությունները:

Հետազոտական աշխատանքների մեծ մասը նախատեսվում է հրապարակել: Հրապարակումները բաժանվում են երկու մասի. «Իրավիճակային գնահատականե, «Ռազմավարական գնահատականե խորագրերով պարտադիր ու թեմատիկ բնույթ կրող հրապարակումներ, հետազոտական աշխատանքի արդյունքում ստացված վերլուծական նյութերի հրապարակումներ (ազատ հրապարակումներ):

### **Էներգետիկ անվտանգություն**

2009 թվականից «Նորավանքե ԳԿՀ էներգետիկ հիմնախնդիրներին նվիրված հետազոտությունները հիմնականում նվիրված են լինելու ՀՀ և տարածաշրջանի էներգետիկ անվտանգության հարցերին:

Նախատեսվում է 2009թ. ապրիլից «Գլոբուս էներգետիկ անվտանգությունե և «Գլոբուս տարածաշրջանային անվտանգությունե տեղեկագրերը միավորել մեկ ընդհանուր տեղեկագրի շրջանակներում: Սա հնարավորություն կտա միավորված տեղեկագրի հետազոտությունների շրջանակների մեջ առնել տարածաշրջանային անվտանգությանն առնչվող թե՛ քաղաքական, թե՛ էներգետիկ հարցերը և կազմակերպել տեղեկագրի թեմատիկ պլանավորումը:

2009-ին նախատեսվում է հրատարակել «Գլոբուս տարածաշրջանային և էներգետիկ անվտանգությունե տեղեկագրի առնվազն 5 համար: Ըստ նախնական ծրագրերի, «Գլոբուս էներգետիկ և տարածաշրջանային անվտանգությունե տեղեկագրի համար 2009-ին նախատեսվում է ներկայացնել հետևյալ հետազոտությունները. Հայաստան-Իրան էներգետիկ համագործակցության հիմնախնդիրները և հեռանկարները, Հարավային Կովկասում իրականացվող էներգետիկ նախագծերի ընթացքն ու հեռանկարները,

Թուրքիայի էներգետիկ քաղաքականությունը Հարավային Կովկասում, Ադրբեջանի էներգետիկ համակարգի ընդհանուր վիճակը, Միջուկային էներգետիկայի զարգացման հեռանկարները Հարավային Կովկասում:

**Իսլամական գործոնը տարածաշրջանում** թեմայի շրջանակներում կուսումնասիրվեն հետևյալ խնդիրները. իսլամական գործոնն Ադրբեջանի ներքաղաքական գործընթացներում, իսլամական գործոնը Ադրբեջանի արտաքին քաղաքականության ոլորտում, Իսլամական արմատականությունն Ադրբեջանում. ներքին և արտաքին գործոններ, էթնիկ գործոնն Ադրբեջանի ներքաղաքական զարգացումներում (լեզգիներ, թալիշներ, ավարներ, ծախուրներ և այլք), իսլամական գործոնը Վրաստանում, Թուրքիայում:

**«Հայաստանը գլոբալ աշխարհում»** վարկանիշային գնահատականների ուսումնասիրության թեմայի շրջանակներում կուսումնասիրվեն հետևյալ խնդիրները. Հայաստանի միջազգային վարկանիշը, Միջազգային կազմակերպությունների/կառավարական կառույցների հետազոտությունների/զեկույցների վերլուծում, Հայաստանի և տարածաշրջանի «ուղեղային կենտրոններ, Տարածաշրջանային ռազմական, ռազմաքաղաքական, տնտեսական իրադրության վերլուծում, Համաաշխարհային և տարածաշրջանային էներգետիկ զարգացումների ու վիճակագրության վերլուծություն:

## ***2.5. «Քաղաքական հետազոտությունների կենտրոնի» զարգացման տեսլականը***

### **Զարգացման հայեցակարգ**

«Քաղաքական հետազոտությունների կենտրոնի» տարածաշրջանային, էներգետիկ անվտանգության, ինչպես նաև «Հայաստանը գլոբալ աշխարհում» ծրագրերն իրենց աշխատանքներում ներառում են ծրագրերից բխող համապատասխան ոլորտների ուսումնասիրություններ, որոնց համադրությունը ստեղծում է թեմատիկ և բովանդակային ընդհանրականություն՝ ստեղծելով հիմք «Նորավանք ԳԿՀ քաղաքական և տարածաշրջանային ռազմավարության ոլորտում առավելագույն համապարփակ հետազոտությունների անցկացման համար:

### **Հետագա զարգացմանն ուղղված քայլեր**

Թեև «Քաղաքական հետազոտությունների կենտրոնի» հետազոտական աշխատանքերն իրենց բովանդակությամբ և ծավալով

նշանակալի են, սակայն կենտրոնի զարգացման և գործունեության որակական մասի բարելավման համար հարկավոր է մի շարք աշխատանքների և գործառույթների իրականացում: Դրանց թվում են.

*1. Կենտրոնի բոլոր փորձագետները կարիք ունեն անընդհատ վերապատրաստման և գիտելիքների ընդլայնման՝ ոչ միայն իրենց կողմից իրականացվող թեմատիկ ոլորտներում, այլև ընդհանուր՝ հասարակագիտական ոլորտում:*

Այստեղ մեծ կարևորություն ունեն թե՛ փորձագետների մասնակցությունները միջազգային գիտաժողովներին, թե՛ «Նորավանքե ԳԿՀ գրադարանի համալրումը ժամանակակից և մասնագիտական գրականությամբ: Այս երկու ուղղություններով արդեն իսկ տարվող աշխատանքները բավարար են: Սակայն գործընթացի հետագա զարգացման համար կարևոր է Հիմնադրամի «Ուսումնական կենտրոնի» շրջանակներում արդիական և բարձրորակ դասախոսությունների և սեմինարների կազմակերպումը, որոնց ուղղությամբ «Քաղաքական հետազոտությունների կենտրոնը» նախատեսում է կատարել լուրջ աշխատանք: Մասնավորապես, կենտրոնն իր հնարավորության շրջանակներում նախատեսում է կազմակերպել միջազգային հեղինակություն ունեցող մասնագետների հրավերք «Նորավանքե ԳԿՀ, նրանց դասախոսությունների կազմակերպում և մասնագիտական քննարկումների անցկացում:

*2. Կենտրոնը նպատակ ունի զարգացնել միջազգային կապերը, հետազոտությունների իրականացմանը ներգրավել նոր, այդ թվում նաև արտասահմանյան մասնագետների, որոնց թեմատիկ և մասնագիտական ուղղվածությունը համընկնում է Կենտրոնի գործունեության ուղղվածության հետ:*

Այս նպատակի իրականացման համար լավ հիմք կարող են հանդիսանալ նաև **Կետ 1-ում** նշված ծրագրերը՝ «Նորավանքե ԳԿՀ հրավիրելու եզակի, սակայն ընտրված և համապատասխան մասնագիտական սոցիալական ցանցում ընդգրկված մասնագետների: Վերջիններիս հետ համագործակցության հաստատումը կարող է տարածվել նաև նրանց մասնագիտական շրջապատի և ոլորտում աշխատող մարդկանց վրա:

*3. Բավական մեծ նշանակություն ունի, իր հերթին, Կենտրոնի փորձագետների մասնակցությունը մասնագիտական ուսումնական ծրագրերին:*

Կենտրոնի զարգացման համար կարևոր է, որպեսզի նրա աշխատանքներում ընդգրկված փորձագետները մասնակցեն արտասահ-

մանյան առաջատար հաստատություններում անցկացվող կարճաժամկետ ուսումնական ծրագրերին՝ նվիրված քաղաքական և ռազմավարական հետազոտություններին, դրանց իրականացման մեթոդաբանությանը: Նշենք, որ այս ոլորտում Հայաստանում ընդհանրապես բազա գոյություն չունի: Առաջիկայում նախատեսում ենք այս նպատակի իրականացման համար բանակցություններ սկսել մի շարք մոսկովյան կենտրոնների և ուսումնական հաստատությունների հետ:

*4. Կարևոր է հետազոտությունների և կանխատեսումների ներքին մոնիթորինգի անցկացումը:*

Հետագա աշխատանքների արդյունավետության համար անհրաժեշտ է Կենտրոնի հետազոտությունների և կանխատեսումների պարբերական մոնիթորինգի անցկացման իրականացումը: Դրա նպատակն է պարզել, թե որքանով են իրականանում Կենտրոնի փորձագետների կանխատեսումներն այս կամ այն զարգացումների վերաբերյալ, պարզել թերացումների պատճառները և քայլեր ձեռնարկել դրանց շտկման և նվազագույնի հասցնելու համար: Քայլերը պետք է ուղղված լինեն նաև աշխատանքներում մեթոդաբանական ժամանակակից բազաների և գործիքների ներդրմանը:

**Առաջիկայում անցկացվելիք հետազոտական աշխատանքների իրականացման մեթոդաբանությունը.**

Հետազոտական աշխատանքներն իրականացվելու են տարածաշրջանային պատկերի (մատրիցայի) համալիր դիտարկմամբ: Միաժամանակ, ուսումնասիրվելու են Հայաստանի և մեր հարևան չորս երկրների ռազմաքաղաքական, հասարակական ու էներգետիկ ոլորտները, ինչպես նաև տարածաշրջանում գործող ուժի կենտրոնների (Ռուսաստան, ԱՄՆ, ԵՄ, Չինաստան, Թուրքիա, Իրան, Իսրայել) քաղաքականությունները: Միայն համալիր հետազոտությունները թույլ կտան հասկանալ տարածաշրջանում տեղ գտնող առանձին իրադարձությունները, զարգացումները և ստանալ իրականությանը հնարավորինս մոտ պատկերացումներ:

Մեթոդաբանության տեսանկյունից, հետազոտական աշխատանքները պարունակելու են հետևյալ բաղկացուցիչները՝ իրադարձությունների, զարգացումների մոնիթորինգ-վերլուծություն-գնահատական-կանխատեսում-առաջարկություններ (մանրամասն տե՛ս Աղյուսակ 1):

**Կենտրոնի գործունեությունից ակնկալվող արդյունքները**

Ակնկալվող հիմնական արդյունքներն են՝

- կանխատեսումներ,


- ռազմավարական/հայեցակարգային գործողությունների ծրագիր, փաստաթղթեր:

Ի հավելումն`

Հայաստանի քաղաքական, էներգետիկ և տեղեկատվական ոլորտներում որոշումների արդյունավետության բարձրացմանը նպաստող տարածաշրջանային իրադրության և դինամիկայի գնահատման ու կանխատեսման մեխանիզմի հիմնում և կիրառում:

Տարածաշրջանի ռազմաքաղաքական, տնտեսական և էներգետիկ ուղղություններին առնչվող համալիր և իրավիճակային վերլուծությունների պատրաստում, որոնք կպարունակեն «մոնիթորինգ-վերլուծություն-գնահատական-կանխատեսում-առաջարկություններ» շղթան:

Ներկայացված ուղղությունների վերաբերյալ Հայաստանի քաղաքական, տնտեսական, էներգետիկ և տեղեկատվական ոլորտներում որոշում կայացնողների համար համալիր բնույթի մոնիթորինգ-գեկույցների և իրավիճակային գեկույցների պատրաստում ու ներկայացում:



### 3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

*Ղեկավար՝ Գագիկ Հարությունյան*

#### **3.1 Հրատարակչական ծրագիր**

Ծրագրի նպատակն է իրականացնել հետազոտություններ Հայաստանի, ԼՂՀ և հայկական համայնքների տեղեկատվական անվտանգության ոլորտի վերաբերյալ, իրականացնել հրատարակչական աշխատանքները (պարբերականներ, գրքեր, ժողովածուների հրատարակություններ և այլն), մշակել, տեղակայել, կանոնավոր շահագործել ու նորացնել ԳԿՀ ինտերնետային կայքը, հարստացնել գրադարանը, ապահովել նյութերի արդյունավետ տարածումը շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, ամրապնդել «Նորավանքե ԳԿՀ կապերը շահագրգիռ հաստատությունների և անհատների հետ:

#### **Ծրագրի շրջանակներում 2008թ. ընթացքում հրատարակվել են՝**

1. Հանձնվել է տպագրության «Մեր հաղթանակները քառահատորի առաջին հատորը
2. Հասմիկ Հմայակյանի «Զրույցներ հայ մշակույթի մասին ժողովածուն
3. «21-րդ ԴԱԸ հանդես - 4 համար,  
«21-ий ВЕК - 2 համար,  
«21-st CENTURY - 2 համար
4. Տեղեկագիր «Նորավանքե ԳԿՀ-ի – 3 համար
5. «Գլոբուսե տեղեկագիր – 5 համար  
«Էներգետիկ անվտանգություն - 12 համար  
«Տարածաշրջանային անվտանգություն - 5 համար  
«Ազգային անվտանգություն - 4 համար  
«Տեղեկատվական անվտանգություն - 5 համար

«Նորավանքե ԳԿՀ-ի [www.noravank.am](http://www.noravank.am) կայքում գետեղվում են Հիմնադրամի վերլուծական հրապարակումները և հետազոտությունները, ինչպես նաև «Նորավանքե-ի գործունեությանը վերաբերող այլ նյութեր: Ներկայումս [www.noravank.am](http://www.noravank.am)-ը Հայաստանում գործող վերլուծական ամենախոշոր ինտերնետային ռեսուրսն է, որից օգտվում են ավելի քան 80 երկրներում, հիմնականում՝ Ռուսաստան, ԱՄՆ, Կանադա, Ուկրաինա, Գերմանիա, Ֆրանսիա, Ադրբեջան:

Կայքէջում 2008թ. (*ղեկտեմբերի 25-ի* դրությամբ) գետեղված նյութերի ընդհանուր թիվը կազմել է՝ **604**, որոնցից հայերեն բաժնում՝ 223, ռուսերեն բաժնում՝ 257, անգլերեն բաժնում՝ 124: Ընդհանուր առմամբ կայքէջում գետեղված նյութերի թիվն է՝ **1695** (2008թ.՝ 604, 2007թ.՝ 477, 2006թ. – 414, 2005թ. – 200), որոնցից վերլուծական բնույթի նյութերի քանակը կազմում է 1101:

2008թ. ընթացքում ապահովվել է կայքէջում գետեղված բոլոր նյութերի (հայերեն, անգլերեն, ռուսերեն) առաքումը բաժանորդներին: Կայքէջում բաժանորդագրվել են ընդհանուր 581 այցելու (հայերեն – 387, ռուսերեն – 313, անգլերեն - 349): Կայքէջի Թեմաներ բաժնում 2008թ. ավելացվել է 6 ենթաբաժին (հայերեն, ռուսերեն անգլերեն):

2008թ. (*ղեկտեմբերի 22-ի* դրությամբ) կայքէջի այցելուների ընդհանուր թիվը կազմում է **60 791**: Միջին այցելությունների քանակը կայքէջ 2008թ. երկրորդ կիսամյակում կազմել է **օրական 300 հոգի**, որը 2 անգամ ավելին է, քան 2008թ. առաջին կիսամյակում և 3 անգամ ավելի, քան 2007թ.:

### ***3.2 Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրություն***

2008թ. ընթացքում «Տեղեկատվական անվտանգությունն է ծրագրի շրջանակներում «Նորավանք-ի աշխատակիցների և ծրագրի աշխատանքներում ներգրավված փորձագետների կողմից կատարվել է **52** վերլուծություն և հետազոտություն, որից 39-ը՝ Հիմնադրամի աշխատակիցների, 10-ը՝ հիմնադրամի հետ շարունակաբար համագործակցող (ասոցիացված) փորձագետների, 3-ը՝ այլ հետազոտողների կողմից **(տե՛ս հավելված 3)**:

#### **Հետազոտությունների ուղղվածությունը**

- Հայաստանի, ԼՂՀ և հայկական համայնքներին վերաբերող տեղեկատվական անվտանգության խնդիրները:
- Հայաստանի դեմ տարվող տեղեկատվական պատերազմները:
- Համաշխարհային և տարածաշրջանային «ուղեղային կենտրոնները»:
- Տեղեկատվական անվտանգության հիմնադրույթների մշակում:

### ***3.3 Կապեր գիտական, վերլուծական և ուսումնական կենտրոնների հետ***

2008թ. շարունակվել է համագործակցությունը և ստեղծվել են նոր կապեր հետևյալ հաստատությունների հետ.

1. «ՀայՌուսԳազԱրդե
2. Կովկասյան լրատվամիջոցների ինստիտուտ
3. Հայաստանի ամերիկյան համալսարան
4. Ռուսաստանի Կրասնոդար քաղաքի Հայ համայնքի «Երկրամասե թերթ
5. ՀՀ Սփյուռքի նախարարություն
6. ՀՀ ԱՄՆ դեսպանատուն
7. Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն (ՆԱՏՕ)
8. ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ
9. Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ, Մոսկվա
10. «Քաղաքական հետազոտությունների կենտրոնե, Մոսկվա
11. Ստրատեգիական հետազոտությունների միջազգային ինստիտուտ, Լոնդոն
12. Ռուսաստանի կառավարման բարձրագույն դպրոց, Մոսկվա

Ամրապնդվել են նաև կապերը Հիմնադրամի հետ համագործակցող արտասահմանյան փորձագետների հետ՝ ի դեմս ամերիկյան փորձագետներ Գեորգի Դերլուզյանի, Ռիչարդ Կիրակոսյանի և հայտնի ռուս վերլուծաբաններ Սերգեյ Գրիկյանի ու Վիկտոր Սերգենի հետ:

### ***3.4 «Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի 2009թ. գործունեության ծրագրերը***

2009թ. «Տեղեկատվական կենտրոնի 2րջանակներում նախատեսվում է՝

#### **Հետազոտական մաս.**

«Հայաստանը և հայությունը՝ արտաքին տեղեկատվական վտանգներե թեմայի 2րջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Հայաստանի տեղեկատվական անվտանգության տեսանկյունից հնարավոր խոցելի հանգույցների առաջացում,
- Հակահայկական տեղեկատվական պատերազմի մոնիթորինգ,



- Հակահայկական գլոբալ տեղեկատվական պատերազմի մոնիթորինգ,
- Հայաստանի դեմ տեղեկատվական պատերազմ վարող երկրների (հիմնականում Թուրքիա եւ Ադրբեջան) խոցելի կետերի հայտնաբերումը և վերլուծումը,
- Հայաստանի դեմ տեղեկատվական պատերազմ վարող հնարավոր երրորդ կողմի երկրների դասակարգում և ուսումնասիրություն:

«Տեղեկատվական անվտանգությունը թեմայի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ կիրառական և մեթոդաբանական նշանակության աշխատանքներ.

- Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ արդի և դասական հեղինակների կողմից մշակված տեսությունների, ինչպես նաև տարբեր երկրների պետական հայեցակարգերի ուսումնասիրություն,
- նշված հայեցակարգերի հնարավոր տեղայնացում հայաստանյան իրականության խնդիրներին,
- տեղեկատվական անվտանգության մարտահրավերների հետազոտման առկա մեթոդաբանության ուսումնասիրություն,
- Հայաստանի հասարակության տեղեկատվական անվտանգության մարտահրավերների հետազոտման մեթոդաբանության և գործիքների մշակում,
- տեղեկատվական հոսքերի և քաղաքական դիսկուրսի վերլուծության համակարգչային ծրագրերի ուսումնասիրություն և դրանց տեղայնացման ուղղությամբ քայլերի մշակում,
- Հայաստանի հասարակության տեղեկատվական անվտանգության մարտահրավերների հետազոտման մշակված մեթոդաբանության և համակարգչային ծրագրերի հիման վրա շարունակական ուսումնասիրությունների իրականացում, ինչպես նաև Հայաստանի հասարակության տեղեկատվական անվտանգության սպառնալիքների և կիրառվող կոնկրետ տեխնիկաների բացահայտում, դրանց չեզոքացման ուղղությամբ քաղաքականության մշակում:

2009թ. նախատեսվում է շարունակել 2008թ. սկսված ադրբեջանական ուղեղային կենտրոնների (*think tank*) ուսումնասիրության աշխատանքները:

#### **«Մեր հաղթանակները նախագիծ**

2009թ. նախատեսվում է հրատարակել «Մեր հաղթանակները քառահատորի երկրորդ և երրորդ հատորները, որոնցում համապատասխանաբար կընդգրկվեն 3-10-րդ և 11-17-րդ դարերում հայ

ժողովրդի տարած հաղթանակների նկարագրությունները պարունակող 80 ակնարկներ:

2009թ. առաջին կիսամյակում ամբողջությամբ կավարտվի բոլոր չորս հատորների ռազմական տերմինների բառարանի մշակումը:

***«Ժամանակակից հայ կապիտալի ուսումնասիրությունն նախագիծ***

Արդեն տևական ժամանակ աշխատանքներ են տարվում հայոց աշխարհասփյուռ տնտեսական ներուժը պարզելու ուղղությամբ: Տպագրության է հանձնված *«Բիզնես: Ժամանակակից Ռուսաստանի ամենահաջողակ հայերը*» ռուսերեն տեղեկատուն (լույս կտեսնի 2009թ. 1-ին եռամսյակում): 2009թ. կիրատարակվի նաև *«Հայաստանի Հանրապետության բիզնես-վերնախավը*» հայերեն տեղեկատուն: Աշխատանքը կլինի շարունակական և կրնդգրկի ԱՄՆ, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի հայ ձեռնարկատերերին:

**Հրատարակչական մաս.**

2009թ. նախատեսվում է հրատարակել.

- «21-րդ Դարը հանդեսի 6, «21-й Век» հանդեսի 4 և «21-st Century» հանդեսի 2 համար,
- «Գլոբուս տարածաշրջանային և էներգետիկ անվտանգությունն տեղեկագրի 6 և «Գլոբուս ազգային անվտանգությունն տեղեկագրի 4-6 համար:
- «Մեր հաղթանակներն քառահատորի 2-րդ և 3-րդ հատորները:
- «Բիզնես: Ժամանակակից Ռուսաստանի ամենահաջողակ հայերը» բիզնես-տեղեկագիրը:

## 4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ղեկավար՝ Տիգրան Հարությունյան

### 4.1 «Նորավանքյան ընթերցումներե

2008թ. ընթացքում կազմակերպվել են դասախոսություններ շաբաթական պարբերականությամբ նախատեսված ուսումնական ծրագրի համաձայն: Ապահովելով դասախոսությունների թեմատիկ բազմազանությունը՝ ընթերցումները հնարավորություն են տվել երիտասարդ մասնագետների, պետական ծառայողների, լրագրողների և այլ մասնագետների մեջ ձևավորել արդիական պատկերացումներ հասարակագիտական և քաղաքագիտական ոլորտների վերաբերյալ:

**Հայաստանը և հայությունը գլոբալ զարգացումներում. արդի վիճակը և մարտահրավերները Նորավանքյան ընթերցումներ**  
**«Նորավանքե ԳԿՀ 2008թ. իրականացված դասախոսությունների ցանկ**

N	Դասախոսի անուն, ազգանուն	Մասնագիտությունը, աշխատանքի վայրը	Դասախոսության վերնագիրը
1.	Գևորգ Պողոսյան	ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրեն, «Հայկական Սոցիոլոգիական ասոցիացիայի» նախագահ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ	Ժամանակակից հասարակական գործընթացները Հայաստանի Հանրապետությունում
2.	Հարություն Մարության	Ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, «Նորավանքե ԳԿՀ Հայագիտական համակարգող-տեղեկատվական կենտրոնի» ղեկավար, պ.գ.դ.	Աղքատության դեմքը Հայաստանում. հիմնական միտումներ
3.	Սամվել Մանուկյան	Մոնիթորինգի և գնահատման մասնագետ, OXFAM	Հանրակրթության զարգացման մի քանի հիմնախնդիրներ

4.	Մերգեյ Մինասյան	Քաղաքագետ, Կովկասյան լրատվամիջոցների ինստիտուտի կովկասագիտության բաժնի վարիչ, պ.գ.թ.	Ջավախքի և Հայաստանի սոցիալ-քաղաքական հիմնախնդիրները
5.	Թամարա Վարդանյան	«Նորավանքե ԳԿՀ «Հասարակագիտական հետազոտություններ և ծրագրի ղեկավար, պ.գ.թ.	Թիֆլիսահայ համայնք. մարտահրավերներ և ռեսուրսներ
7.	Արաքս Փաշայան	Արաքսագետ, պ.գ.թ., դոցենտ	Իսլամն Ադրբեջանում

### **Խնդիրներ և առաջարկներ**

«Նորավանքե ԳԿՀ-ն՝ որպես «ուղեղային կենտրոն, կարևորում է կրթական ծրագրերի իրականացումը: 2008թ. ընթացքում հաջողությամբ իրականացվել է «Նորավանքյան ընթերցումներ-ի առաջին փուլը:

### **4.2 «Ուսումնական կենտրոնի 2009թ. գործունեության ծրագիրը**

2009թ. նախատեսվում է ստեղծել «Ամառային դպրոցի ինստիտուտը:

«Ամառային դպրոցների ինստիտուտը լայնորեն կիրառվում է արտասահմանյան (հիմնականում արևմտյան) գիտաուսումնական և հետազոտական կենտրոններում:

Նմանատիպ հայկական կենտրոններում առայժմ ամառային դպրոցների ինստիտուտը կայացած չէ:

Ամառային դպրոցները թույլ են տալիս կարճ ժամանակահատվածում ինտենսիվ ուսուցման շնորհիվ մասնակիցներին (ուսանողներ, հետազոտողներ, պետական կառավարման տարբեր օղակների ներկայացուցիչներ և այլն) տալ առավելագույն գիտելիքներ հետաքրքրություն ներկայացնող թեմայի կամ թեմաների շուրջ:

Խիստ կարևորվում է թեմայի ընտրությունը և մեթոդաբանությունը, որով անցկացվելու է ամառային դպրոցը:

Պլանավորվում է 2009թ. ամռանը՝ հուլիս, օգոստոս ամիսներին, անցկացնել ամառային դպրոց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

### **1. Նպատակը**

ԼՂՀ ընտրությունը պայմանավորվում է նրանով, որ կոնֆլիկտի կարգավորումը 2008թ. մտել է նոր փուլ, և անհրաժեշտություն կա հասկանալ ընթացող գործընթացները: Հիմնական մասնակիցները

լինելու են բարձր կուրսի ուսանողները, երիտասարդ հետազոտողները, որոնց հետաքրքրում է ազգի և պետության ապագան ու անվտանգությունը:

Ստացված գիտելիքները հետագայում կարող են կիրառել իրենց գործունեության ընթացքում նաև իրենք արդեն կարող են հանդիսանալ գիտելիքի փոխանցող:

Նպատակներից մեկն է նաև այդ մշակույթի ներմուծումը երիտասարդների շրջանակ, որոնք հետագայում դառնալու են «որոշում կայացնողներ»:

## **2. Նախապատրաստական փուլ**

Մինչև ամառային դպրոցի անցկացումն անհրաժեշտ է բազմակողմանի ուսումնասիրություն տարբեր ուղղություններով.

**ա.** Գլոբալ ուժային կենտրոնների ռազմավարական մշակումների հետազոտում և մեր տարածաշրջանին վերաբերող սցենարների ու մեզ հետաքրքրող թեմաների առանձնացում: Առանձնացված թեմաները հիմնականում վերաբերելու են ՀՀ, ԼՂՀ և հայության տեղեկատվական անվտանգությանը (ներառելով նաև մշակութային անվտանգությունը) և մեր տարածաշրջանին վերաբերող սպասվող զարգացումները:

**բ.** Հայտնի գիտակրթական, ռազմավարական հետազոտությունների կենտրոնների և «think tank-երի փորձի ու մեթոդաբանական մշակումների ուսումնասիրություն:

**գ.** Թեմաների ընտրությունից հետո պետք է ընտրել համապատասխան մասնագետների, որոնք կարող են պատշաճ ձևով ներկայացնել հետաքրքրող թեման: Մասնագետները կարող են լինել արտերկրից, Հայաստանից նաև ԼՂՀ-ից:

Հինմնական շեշտը դրվելու է արտերկրից մասնագետ հրավիրելու վրա:

**դ.** Լսարանը ընտրվելու է հիմնականում Արցախի համալսարանի և ՀՀ բուհերի ուսանողներից, երտասարդ հետազոտողներից:

**ե.** Ծրագրվում է ֆինանսական և տեխնիկական միջոցները ներգրավել նաև անհատ ձեռներեցներից: Անհրաժեշտ ֆինանսավորման դեպքում ամառային դպրոցը կգործի 10-15 օր:

## **3. Ընթացքը**

Ամառային դպրոցը կգործի 1-2 շաբաթվա ընթացքում: Տևողությունը կախված է անհրաժեշտ ֆինանսավորումից:

Ամառային դպրոցն անցկացվելու է ԼՂՀ-ում, ամենայն հավանականությամբ՝ Շուշի քաղաքում:

#### **4. Արդյունքների ամփոփում և հաշվետվություն**

Ամառային դպրոցի անցկացումից հետո՝ 2 ամսվա ընթացքում, կամփոփվեն արդյունքները: Պլանավորվում է տպագրել գրքույկ, որը կներառի ամառային դպրոցի ընթացքում ներկայացված թեմաները, ուսանողների կատարած մշակումները:

## 5. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2008թ. կատարվել են «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի գործունեության ապահովմանն ծրագրի գծով հետևյալ աշխատանքները:

2008թ. տարեսկզբին «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի կառուցվածքին համապատասխան՝ իրականացվել է նոր ծրագրերի և կենտրոնների 2008թ. գործունեության ուղղությունների, հաստիքների և աշխատողների վարձատրության սահմանում: Դրա հիման վրա իրականացվել են ամբողջ աշխատանքային անձնակազմի հետ համապատասխան պայմանագրային փոփոխությունների հրամանագրումը և նրանց հետ համապատասխան աշխատանքային փոփոխված պայմանագրերի կնքումը. կազմվել են թվով 40 աշխատանքային պայմանագրերի փոփոխություններ, որոնք գրանցվել են աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանում:

«Նորավանքե գիտակրթական հիմնադրամի աշխատանքների 2008թ. ծրագրերի ապահովման նպատակով կազմվել են շուրջ **180** հրամաններ, գիտական և ստեղծագործական աշխատանքների **170** պայմանագրեր, անձնական գործեր, որոնց արդյունքում «Նորավանքե գիտակրթական հիմնադրամը 2008թ. շարունակել է բնականոն գործունեությունը:

2008թ. «Նորավանքե գիտակրթական հիմնադրամը ձեռք է բերել **3,4** մլն դրամի ապրանքանյութական արժեքներ, այդ թվում սարքավորումներ և համակարգչային տեխնիկա **3,0** մլն դրամի, նյութեր և այլ ապրանքներ, կատարվել են **4,8** մլն դրամի կոմունալ ծախսեր:

2008թ. պահպանվել են նաև «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի պահպանման հետ կապված անհրաժեշտ նյութածախսի նորմաները:

Շարունակել են կանոնակարգվել նաև համակարգչային տեխնիկայի օգտագործման, ձեռքբերման, դուրս գրման հետ կապված աշխատանքները, մասնավորապես ձեռք են բերվել 9 հատ նոր համակարգիչներ:

Իրականացվել է նաև ծրագրերի ղեկավարների կողմից ամենամսյա նյութածախսի հաշվետվությունների ներկայացում՝ ծրագրերի գծով ծախսված նյութական արժեքների վերաբերյալ:

Պահպանվել և իրականացվել է «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի ավտոմեքենայի վերանորոգման աշխատանքների փաստաթղթավորման հետ կապված կարգը՝ այդ վերանորոգումների երաշխիքային ժամկետների ընդգրկումով: 2008թ. կապիտալ նորոգման է ենթարկվել նշված ավտոմեքենայի շարժիչը, բացի այդ, ավտոմեքենան 2 անգամ ընթացիկ նորոգման է ենթարկվել:

2008թ. «Նորավանքե գիտակրթական հիմնադրամում աշխատանքներ են տարվել բակի բարեկարգման, կանաչապատման և ձևավորման ուղղությամբ, մասնավորապես՝ տնկվել են տարբեր թփեր, հոկտեմբեր ամսին՝ 50 սամշիտ տեսակի թուփ: Բացի այդ, 2008թ. նոյեմբեր ամսին էտվել են բակի շուրջ 20մ բարձրությամբ երկու թեղենիները, որոնք իրենց բարձրության պատճառով վտանգավոր էին քամուց տապալվելու առումով:

Շարունակվել են «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի պատվիրված գիտական աշխատանքների, հոդվածների, գրախոսությունների և նմանատիպ այլ նյութերի ըստ ուղղությունների համակարգման, խմբավորման և արխիվացման աշխատանքները: Ապահովվել են «Նորավանքե ԳԿՀ-ի հետ կնքված պայմանագրերի, ստացված գիտական նյութերի գրանցամատյանների վարման աշխատանքները:

Շարունակվել են գիտական ուսումնասիրությունների, վերլուծությունների, հոդվածների, դրանց եզրակացությունների և այլ նյութերի պայմանագրերի, աշխատանքի ընդունման ակտերի կազմման աշխատանքները:

Իրականացվել են «Նորավանքե ԳԿՀ-ի կողմից հրատարակման ենթակա նյութերի տրամադրումը տպարան, համապատասխան պայմանագրերի կնքումը, հրատարակված նյութերի բաշխումը, դրանց առաքումը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթավորումը, մասնավորապես՝ կատարվել է 2008թ. նոր չորս ուղղություններով հրատարակվող «Գլոբուս Էներգետիկ անվտանգությունե, «Գլոբուս տեղեկատվական անվտանգությունե, «Գլոբուս ազգային անվտանգությունե, «Գլոբուս տարածաշրջանային անվտանգությունե տեղեկատվական-վերլուծական տեղեկագրերի կազմարարական և բաշխման աշխատանքները, «21-րդ Դարե ամսագրերի հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակների թվով 8 (ութ) համարներ, Հասմիկ Հմայակյանի «Զրույցներ հայ մշակույթի մասինե հարցազրույցների ժողովածուի, ինչպես նաև «Նորավանքե ԳԿՀ հրատարակած 3 (երեք) տեղեկագրերի բաշխման աշխատանքները:

Կատարվել են համապատասխան փոփոխություններ «ՀայՌուսգազարդե ՓԲԸ-ի և «Նորավանքե ԳԿՀ-ի միջև վերլուծական աշխատանքի իրականացման պայմանագրում, կազմվել է այդ պայմանագրի փոփոխությունը, որով երկարացվել է պայմանագրի գործողության ժամկետը, և դրա հիման վրա «Գլոբուս Էներգետիկատեղեկագրի հրատարակումը, ըստ այդ պայմանագրի յուրաքանչյուր ամիս «ՀայՌուսգազարդե ՓԲԸ-ին «Գլոբուս Էներգետիկատեղեկագրի տրամադրումը երկարացվել է մեկ տարով՝ մինչև 2009թ. ապրիլի 1-ը:



«ՀայՌուսգազարդե ՓԲԸ-ի հետ կազմվել է նաև «ՀայՌուսգազարդե ՓԲԸ-ի համար «Մեր հաղթանակները գրքի տպագրման աշխատանքների պայմանագիր»:

2008թ. կնքվել և վերակնքվել են «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի կողմից հրատարակվող «Նորավանքե ԳԿՀ 21-րդ Դարե ամսագրերի բաժանորդագրության պայմանագրերը՝ մասնավորապես ՀՀ Կենտրոնական բանկի, «ՀայՌուսգազարդե ՓԲԸ-ի և «Հայամուլիե հետ և այլն:

«Նորավանքե գիտակրթական հիմնադրամում կազմակերպվել են սեմինարներ և կոնֆերանսներ, ինչպես նաև գործուղումներ: Ներկայացվել են սեմինարների, կոնֆերանսների և գործուղումների կազմակերպման զեկուցագիր-առաջարկներ, համապատասխան հրամաններ, կատարվել են սեմինարների և կոնֆերանսների անցկացման հետ կապված գնումները, կազմվել են համապատասխան արձանագրություններ, հաշվետվություններ, ակտեր, բաշխման ցուցակներ, իրականացվել է ամսագրերի և տեղեկագրերի բաշխում, պատրաստվել են զեկուցագրեր, լիազորագրեր, ծանուցումներ, նյութական ապրանքների ձեռքբերման ամենամսյա հաշվետվություններ, գրանցվել են էլքի, մուտքի, ստացված փաստաթղթերի, աշխատանքային և այլ պայմանագրերի մատյանները և հրամանագիրքը:

«Նորավանքե ԳԿՀ համակարգչային տեխնիկայով տպագրման աշխատանքների բարելավման համար կնքվել է նոր պայմանագիր սպասարկող նոր կազմակերպության հետ («Պատրոնե ՍՊԸ), որի միջոցով իրականացվել են համակարգչային տպիչների լիցքավորման և փոխման աշխատանքները:

«Նորավանքե ԳԿՀ վարպետի միջոցով կատարվել է «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի Գ.Նժդեհի 23/1 հասցեում գտնվող շենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հարկերի սանհանգույցների ընթացիկ նորոգում, մասնավորապես փոխվել են ճկուն խողովակները, 3-րդ հարկի չաշխատող ծորակները փոխվել են նորերով, «Երևանջուրե ՓԲԸ առաջարկության հիման վրա փոխվել է «Նորավանքե ԳԿՀ-ն սնուցող ջրագծի ջրաչափը և տեղադրվել է նոր և ջրամատակարարման պայմանագրի պահանջներին համապատասխանող ջրաչափ: Մշտապես ուշադրության կենտրոնում են եղել լուսավորության, ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու, հեռախոսի համակարգերը: Մասնավորապես, մշտապես փոփոխվել են այրված լամպերը, մաքրվել են կոյուղագծերը, վերացվել են ջեռուցման համակարգի վթարները, փոխվել են թվով 3 հատ հեռախոսներ, ձեռք է բերվել և տեղադրվել թվով 5 հատ հեռախոսային ապարատ: «Նորավանքե ԳԿՀ 4-րդ հարկում

անցկացվել է ջեռուցման համակարգ, այդ հարկի համար տեղադրվել է նոր կաթսա, կատարվել է գազի գծի համապատասխան փոփոխություն՝ նախօրոք ձեռք բերելով համապատասխան թույլտվություն համապատասխան կազմակերպությունից: Կատարվել է նաև «Նորավանքե ԳԿՀ 1-ին, 2-րդ, 3-րդ հարկերի գործող ջեռուցման համակարգերի տեխնիկական հսկողություն և նորոգում՝ նախքան ջեռուցման սեզոնին դրանց աշխատանքն սկսելը: 2008թ. դեկտեմբերին վերանորոգվել են «Նորավանքե ԳԿՀ 2-րդ հարկի էլեկտրագծերը, որոնք այրվել էին էլեկտրական վթարի պատճառով: 2008թ. «Նորավանքե ԳԿՀ-ի համար տեղադրվել է նաև 2-րդ վերահսկիչ էլեկտրական «գիշեր-ցերեկեռեժիմով աշխատող հաշվիչ:

Կատարվել է նաև «Նորավանքե ԳԿՀ շենքի շքամուտքի դռների վերանորոգում, մասնավորապես փոխվել են ծխնինները, իրականացվել է 1-ին և 4-րդ հարկերի գազատար խողովակների համապատասխան ձևափոխում եռակցման աշխատանքների միջոցով:

Երկու անգամ իրականացվել են թունավոր միջատների դեմ պայքարի նպատակով դեռատիզացիոն աշխատանքներ:

Տարեվերջին կատարվել և ավարտվել է նաև «Նորավանքե ԳԿՀ տարեկան գույքագրման աշխատանքը:

Ուշադրության կենտրոնում է եղել նաև «Նորավանքե ԳԿՀ-ին սեփականության իրավունքով պատկանող Վայոց ձորի մարզի Ամաղու գյուղի տարածքում գտնվող գիտաուսումնական համալիրի վերանորոգման աշխատանքների ընթացքը, որոնք ՀՀ կառավարության որոշմամբ ընդգրկված են պետական պատվերի (գնումների) շրջանակներում և իրականացվում են Քաղաքաշինության նախարարության կողմից: Ընդ որում, Քաղաքաշինության նախարարության կողմից 2007թ. ավարտված են **50** մլն դրամի շինարարական աշխատանքներ, որոնք ընդգրկում են շենքի ամրացման և տարածքի վերանորոգման աշխատանքները, իսկ 2008թ. իրականացվել են շենքի հիմնական նորոգման **70** մլն դրամի այլ աշխատանքները՝ մասնավորապես պատուհանների փոխում:

Ամաղու գյուղի շենքի անվտանգության պահպանության համար բանակցություններ են վարվել «Ջերմուկշինիե և Արենիի գյուղապետի հետ: Ամաղու գյուղի նշված համալիրի ինչպես պահպանման, այնպես էլ կահավորման համար անհրաժեշտ են լինելու ֆինանսական միջոցներ, որոնք ներկայումս նախատեսված չեն «Նորավանքե ԳԿՀ ֆինանսական հատկացումների մեջ:

Մեր կողմից կատարված նախնական հաշվարկով «Նորավանքե ԳԿՀ-ին սեփականության իրավունքով պատկանող Վայոց ձորի մարզի

Ամաղու գյուղի տարածքում գտնվող գիտաուսումնական մասնաշենքի շահագործման հանձնելու դեպքում «Նորավանքե ԳԿՀ-ին լրացուցիչ անհրաժեշտ է **22,2**մլն դրամ:

Սակայն, անհրաժեշտ ենք համարում նշել, որ 2008թ. տարեվերջին ՀՀ պաշտպանության նախարարության գորքերի բնակավորման ծառայության կողմից «Նորավանքե ԳԿՀ-ին տեղեկացվել է, որ ՀՀ վարչապետի 24.03.1993թ. «ՀՀ պաշտպանության նախարարության տնօրինությանը վարչական շենքեր հանձնելու մասին» N100 կարգադրությամբ նախկին Ամաղու գյուղի մշակույթի տան շենքը հանձնված է ՀՀ պաշտպանության նախարարության տնօրինությանը:

Բացի այդ, մեր տեղեկությամբ, նախկին Ամաղու գյուղի մշակույթի տան նկատմամբ ծրագրեր ունեն նաև ՀՀ Սփյուռքի նախարարությունը, ինչպես նաև Արենիի գյուղապետարանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման պահանջներին համապատասխան շարունակվել է աշխատողների հետ կնքված պայմանագրերի գրանցագրքի վարումը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ հաշվետվություններ են ներկայացվել ՀՀ կառավարության աշխատակազմին, ինչպես նաև հարկային, պետական սոցիալական ապահովագրության մարմիններին և թաղապետարանին, ինչպես ՀՀ բյուջեից տրված միջոցների, այնպես էլ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ «Նորավանքե ԳԿՀ և Նիդեռլանդների Լեյդենի համալսարանի միջև համագործակցության ենթատեքստում գիտական աշխատանքների, ինչպես նաև Իսրայելի Բաց համալսարան «Նորավանքե ԳԿՀ-ի աշխատակիցներին գործուղելու համար տրամադրված 3,0 մլն դրամի համար:

Կազմվել և ՀՀ կառավարության աշխատակազմին է ներկայացվել նաև «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի 2009-2011թթ. բյուջետային միջնաժամկետ ծախսային ծրագիրը, որը ներառել է «2009-2011թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերը՝ հաշվի առած «Նորավանքե ԳԿՀ զարգացման ծրագրերը, ինչպես նաև շահագործման ենթակա «Նորավանքե ԳԿՀ-ին սեփականության իրավունքով պատկանող Վայոց ձորի մարզի Ամաղու գյուղի տարածքում գտնվող գիտաուսումնական համալիրի պահպանման համար լրացուցիչ **22,2**մլն դրամը:

2008թ. ընթացքում «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի գործունեությունն ապահովող բոլոր օղակները, այդ թվում հաշվապահությունը, մատակարարումը, կոմունալ սպասարկումը, աշխատել են արդյունավետ՝ ապահովելով անխափան գործունեություն:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «Հայաստանի Հանրապետությունե օրաթերթում հրապարակվել է «Հիմնադրամի մասին ՀՀ օրենքով պահանջվող «Նորավանքե ԳԿՀ գործունեության մասին հաշվետվությունը:

2008թ. ՀՀ պետական բյուջեից որպես աջակցություն «Նորավանքե ԳԿՀ-ին հատկացվել է 95098,0 հազ. դրամ, իսկ ՀՀ վարչապետի ֆոնդից՝ նպատակային ծախսերի համար՝ 3 000,0 հազ. դրամ: Բացի այդ, «Նորավանքե ԳԿՀ-ն իր կողմից հրատարակվող ամսագրերի և տեղեկագրերի բաժանորդագրությունից, ինչպես նաև պատրաստված «Մեր հաղթանակները գրքի «Հայռուսգագարդե ՓԲԸ-ին 1000 օրինակ վաճառքից ստացել է 18832,0 հազ. դրամ: «Նորավանքե ԳԿՀ-ի 2008թ. ստացված ֆինանսական միջոցները կազմել են ընդամենը 116930,0 հազ. դրամ, որի մեջ 83,9%-ը կազմել են ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցները. իսկ 16,1%-ը՝ «Նորավանքե ԳԿՀ-ի ամսագրերի, տեղեկագրերի և գրքերի դիմաց ստացված միջոցները:

2008թ. նշված ֆինանսական միջոցներից ծախսվել է 115 312,0 հազ. դրամ: Ընդ որում, ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցները ծախսվել են ամբողջությամբ, իսկ բաժանորդագրության համար ստացված միջոցներից չծախսված մնացորդը կազմել է 1 615,0 հազ. դրամ:

Անհրաժեշտ է նշել, որ 2008թ. կատարված ծախսերի մեջ գիտական ստեղծագործական ծախսերը կազմել են 106002,0 հազ. դրամ կամ ստացված ֆինանսական միջոցների 91,9%, իսկ «Նորավանքե ԳԿՀ գործունեության ապահովման ծախսերը՝ 9 310,0 հազ. դրամ կամ ստացված ֆինանսական միջոցների 6,7%-ը:

Կցվում է «Նորավանքե ԳԿՀ 2008թ. ստացված միջոցների և կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկանք՝ աղյուսակի տեսքով:

**«Հայագիտական կենտրոնի շրջանակներում հրատարակված  
աշխատանքները**

2008թ. ընթացքում «Նորավանքե ԳԿՀ Հայագիտական կենտրոնի թեմատիկայի շրջանակներում հրատարակվել է 142 աշխատանք, այդ թվում 111-ը՝ Կենտրոնի աշխատակիցների, 23-ը՝ «Նորավանքե ԳԿՀ այլ փորձագետների, 8-ը՝ Կենտրոնի հետ համագործակցող այլ հետազոտողների կողմից:

**Թեմա. «Հայության, մասնավորապես հայ համայնքների անվտանգության  
խնդիրները  
ծրագրի շրջանակներում իրականացված հրատարակումներ (55)**

**«21-րդ դարե տեղեկատվական-վերլուծական հանդես**

1. *Խաչատուր Դադայան*, Հայոց առևտրատնտեսական ներկայությունը Թիֆլիսում (ուշ միջնադար – 1918թ.), 2008, թիվ 1, էջ 124-15:
2. *Գազիկ Հարությունյան*, Հայության կազմակերպման և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները, 2008, թիվ 2, էջ 318:

**“21-й век” информационно-аналитический журнал**

3. *Գագիկ Թերտերյան*, Вопросы организации Армянства и информационной безопасности, 2008, N 2, с. 128-142.

**“21-st century” information and analytical journal**

4. *Gagik Terteryan*, System Security and Information Security of Armeniacy, 2008, N 2, pp. 55-68.
5. *Khachatur Dadayan*, Armenian Commercial Presence in Tiflis, 2008, N 2, pp. 69-89.

**«Գլոբուսե վերլուծական տեղեկագիր**

6. *Վահրամ Հովյան*, Ամերիկահայ համայնք. գործողությունների նոր ասպարեզ, 2008, թիվ 1, էջ 28-29:
7. *Թամարա Վարդանյան*, Վիրահայությունը Վրաստանի նախագահական ընտրություններում, 2008, թիվ 2, էջ 7-10.

8. *Михаил Агаджанян*, Диаспоральный ресурс Армении и функциональная стыковка Черноморского и Каспийского бассейнов, 2008, N 2, с. 34-36.

**«Գլոբուսե վերլուծական տեղեկագիր. ազգային/տեղեկատվական անվտանգություն»**

9. *Խաչատուր Դադայան*, Ժամանակակից Ռուսաստանի «հայկականե կապիտալը. - Գլոբուս. Տեղեկատվական անվտանգություն (ծառայողական օգտագործման):
10. *Վահրամ Հովյան*, Հայկական համայնքային վերկայքերը ԱՄՆ-ում. - Գլոբուս. ազգային անվտանգություն, 2008, թիվ 2, էջ 19-25:
11. *Թամարա Վարդանյան*, «Հայաստանը և նրա հարևանները շարքից միջազգային կոնֆերանս Միչիգանի համալսարանում (ԱՄՆ). - Գլոբուս. ազգային անվտանգություն, 2008, թիվ 2:
12. *Վահրամ Հովյան*, Կիպրահայ համայնք. համայնքային, քաղաքական և սոցիալական որոշ հարցեր. - Գլոբուս. ազգային անվտանգություն, 2008, թիվ 4, էջ 56-60:
13. *Հայկ Քոթանջյան*, Հայ գիտության զարգացումը Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության տրամաչափի մեջ. - Գլոբուս. տեղեկատվական անվտանգություն, 2008, թիվ 5, էջ 6-9:

**Տեղեկագիր «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի»**

14. *Արարս Փաշայան*, Բամասկոսի հայ համայնքը. ներկան և հեռանկարը. - Տեղեկագիր «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի», 2008, թիվ 23:

**«Հանրապետականե ամսագիր»**

15. *Գազիկ ՏերՀարությունյան*, Հայության կազմակերպման խնդիրների շուրջ, թիվ 4, էջ 2-6:
16. *Գազիկ ՏերՀարությունյան*, Հայության կազմակերպման հարցեր. տեղեկատվական-ցանցակենտրոն համակարգ, թիվ 5, էջ 1-5:

**Այլ պարբերականներում և հրատարակություններում**

17. Мы-самостоятельная цивилизация: беседа в фонде “Нораванк” (в беседе участвовали Г. Арутюнян, А. Марутян, С. Саруханян). – Анив, 2008, N 1
18. *Խաչատուր Դադայան*, Վաճառականական պատմություններ. – “Литературная Армения”, 2008, N 1
19. *Թամարա Վարդանյան*, Թիֆլիսն այսօր. հայ-վրացական միջլեռնիկ փոխընկալումները. - Հայ ազգաբնակչության և հնագիտության

- խնդիրներ, 3-րդ պրակ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, էջ 245-251:
20. *Թամարա Վարդանյան*, Թիֆլիսահայ համայնք. մարտահրավերներ և ռեսուրսներ. - «Երկիրե շարաթաթերթ, 5 փետրվարի 2008թ.:
  21. *Խաչատուր Դադայան*, «Ֆինանսական հանճարը» («Տրոյկա դիալոգե ներդրումային ընկերությունների խմբի տնօրենների խորհրդի նախագահ Ռ.Վարդանյանի մասին). - «Ազգե օրաթերթ, 5 ապրիլի 2008թ.:
  22. *Խաչատուր Դադայան*, Ապահով մարդը («Ռուսոստրախե ապահովագրական ընկերությունների խմբի նախագահ Դ.Խաչատուրովի մասին). - «Ազգե օրաթերթ, 19 ապրիլի 2008թ.:
  23. *Խաչատուր Դադայան*, Զովագուցիչ ըմպելիքից՝ արտադրական կայսրություն («Բորոդինոն ընկերությունների խմբի նախագահ Տ. Ներսիսյանի մասին). - «Ազգե օրաթերթ, 17 մայիսի 2008թ.:
  24. *Խաչատուր Դադայան*, Կապիտալիզմի շնածուկ Ռադոն («Ռադո-Ս-գրուպե ընկերությունների խմբի նախագահ Ռ.Սահակյանի մասին). - «Ազգե օրաթերթ, 17 մայիսի 2008թ.:
  25. *Խաչատուր Դադայան*, Խումհար՝ Մելքոնյան կրթական հաստատության փակումից հետո. - «Ազգե օրաթերթ, 31 մայիսի 2008թ.:
  26. *Գազիկ Տեր-Հարությունյան*, Հայության կազմակերպման խնդիրների շուրջ. Երկիր, հունիսի 6, 2008 (թիվ 47):
  27. *Խաչատուր Դադայան*, Առատաձեռն բիզնես-կայսրը («Տաշիրե ընկերությունների խմբի նախագահ Ս.Կարապետյանի մասին). - «Ազգե օրաթերթ, 14 հունիսի 2008թ.:
  28. *Խաչատուր Դադայան*, Bank of Simonyan («Մորգան Սթենլի բանկե ՍՊԸ նախագահ Հ.Սիմոնյանի մասին). - «Ազգե օրաթերթ, 21 հունիսի 2008թ.:
  29. *Гагик Тер – Арутюнянц*, Армения и армянство: возможные сценарии развития. – Голос Армении, 28 августа 2008 г. (N 89):
  30. *Թամարա Վարդանյան*, Թիֆլիսահայ համայնքը վրացական ազգայնականության ակտիվացման փուլում. - «Ազգե օրաթերթ, 4 հոկտեմբերի 2008թ.:
  31. *Гагик Тер–Арутюнянц*, Сетевая организация Армянства. – Византийское наследие, 2008, N 11-12:
  32. *Թամարա Վարդանյան*, Հայ համայնքների կազմակերպման ընդհանուր դրույթներ. - Հայկական համաշխարհային կոնգրեսի կողմից հրատարակվելիք ժողովածու (հանձնված է տպագրության), 2008

33. *Թամարա Վարդանյան*, Պատմական անցյալն ու ստերեոտիպերը հայ-վրացական միջէթնիկ և Հայաստան-Վրաստան միջպետական հարաբերություններում. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից հրատարակվելիք ժողովածու (հանձնված է տպագրության), 2008:

***Զեկուցումներ գիտաժողովներում, քննարկումներում***

34. *Խաչատուր Դադայան*, Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը և ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը. - Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները. գիտագործնական միջազգային գիտաժողով: Նիկոսիա, ապրիլի 18-20, 2008թ.:

35. *Թամարա Վարդանյան*, Հայերի ցեղասպանությունը 1915-1923թթ. Թուրքիայի ցեղասպան քաղաքականությունը. - «Հայերի ցեղասպանությունը 1915-1923թթ. հայացք Թբիլիսիից, Ստամբուլից և Երևանից, միջազգային կոնֆերանս, Թբիլիսի, ապրիլ, 2008:

36. *Թամարա Վարդանյան*, Թիֆլիսահայ համայնք. ռեսուրսներ և մարտահրավերներ. - Նորավանքյան ընթերցումներ, ապրիլ 25, 2008:

37. *Թամարա Վարդանյան*, «Պատմությունից պատմությունե ամառային դպրոցի արդյունքների քննարկում, Սանկտ Պետերբուրգ, մայիս, 2008:

38. *Թամարա Վարդանյան*, Հայ-վրացական միջէթնիկ հարաբերությունները Թբիլիսիում. ստերեոտիպեր և փոխընկալումներ. - «Վրաստան. Ազգային մշակույթի կերտումե, միջազգային կոնֆերանս, Միջիզանի համալսարան (ԱՄՆ), մայիս 15-18, 2008:

39. *Թամարա Վարդանյան*, Ելույթ «Հասարակական պալատ. կարող է այն գործել Հայաստանումե հասարակական քննարկումներում, Երևան, մայիսի 30, 2008:

40. *Թամարա Վարդանյան*. Ելույթ «Հայ-վրացական ներկայիս հարաբերությունների շուրջե հասարակական քննարկումներում, Երևան, մայիսի 30, 2008:

41. *Թամարա Վարդանյան*, Վրաստանում հայկական եկեղեցիների խնդիրը. - «Հայելիե ակումբ, հունիս 10, 2008:

42. *Թամարա Վարդանյան*, Ընթացող դեմոկրատական բարեփոխումները Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Մոլդովայում, Ուկրաինայում. Միջազգային կոնֆերանս, Թբիլիսի (Վրաստան), հոկտեմբերի 15-20, 2008:



43. *Թամարա Վարդանյան*, Հայ համայնքների կազմակերպման ընդհանուր դրույթներ. - «XXI դար. Հայ ժողովրդի ազգային շահերը միջազգային գիտաժողով, Ծաղկաձոր, հոկտեմբերի 22-24, 2008:
